

**ԱՐԺԵՅԱՄԱԿԱՐԳԻ ԱԴԱՊՏԱՑՈՒՄԸ  
ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ  
Դավիթ Հովհաննիսյան**

Ժամանակակից քաղաքակրթությունն արտաքին բնույթ ունեցող ազդեցություն է գործում բոլոր մշակույթների վրա, սակայն շնորհիվ այդ մշակույթների հիմքում ընկած արժեքային համակարգի՝ քաղաքակրթական հոսանքներով եկող արտաքին արժեքները, կառույցները գտվում են:

Հասկանալի է, որ կայուն եւ զարգացման մեծ ներուժ ունեցող հասարակությունները նրանք են, որոնց արժեհամակարգում հավասարակշռված ձեւով ներկայացված են այդ հասարակության հիմքը կազմող ավանդական արժեքները եւ քաղաքակրթության հոսանքով բերված արտաքին այն արժեքները, որոնք, զտումն անցնելով, ներգրավվում են տվյալ հասարակության արժեքային համակարգում:

Երբ այս փոխադարձ հավասարակշռման համակարգը խախտվում է եւ գերակայում են կամ ավանդական, կամ էլ արտաքին արժեքները, հասարակությունը ճգնաժամի մեջ է ընկնում՝ ցուցադրելով կամ լճացման, կամ էլ քայքայման նշաններ:

Ա.Թոյնբիի իր քաղաքակրթական տեսության մեջ շեշտում է հատկապես *մարտահրավերի* կարեւորությունը, որը համեմատելի է հավասարակշռման խախտման երեւույթին:

Նա գրում է. «Ես համարում եմ, որ քաղաքակրթությունները ծնվում եւ զարգանում են՝ հաջող կերպով պատասխանելով մեկը մյուսին հաջորդող *մարտահրավերներին*: Նրանք ճեղքվածքներ են տալիս եւ քայքայվում այն ժամանակ, երբ հանդիպում են այնպիսի *մարտահրավերի*, որին չեն կարողանում պատասխանել»:

Թոյնբիի գործածած եզրից օգտվելով՝ կարելի է ասել, որ *մարտահրավերը*, որը միշտ էլ արտաքին բնույթ ունի, առաջացնում է այնպիսի իրավիճակ, երբ հասարակությունը, որին ուղղված է այդ մարտահրավերը, իր գոյատեւումն ապահովող պատասխան գտնելու համար դիմում է, այսպես կոչված, «*բացարձակ գրադարանին*»:

«Բացարձակ գրադարանը» պարունակում է պատմության ընթացքում մարդկության կուտակած ամբողջ փորձը, որը բացարձակ բնույթ ունի: «Բացարձակ գրադարանից» օգտվելու գործընթացը, ըստ էության, մշտական է եւ չի ընդհատվում: Սակայն պատմության շրջադարձային պահերին,

ինչպիսիք են *մարտահրավերին* պատասխան տալու պատմական ժամանակաշրջանները, բացարձակ փորձից անհրաժեշտ արժեքային հիմքեր, գիտելիք եւ տեղեկություն ստանալու պահանջը ձեռք է բերում սկզբունքային բնույթ եւ հանգեցնում (այն դեպքում, երբ պատասխանը գտնվում է) նոր որակի ձեւավորմանը:

«Բացարձակ գրադարանից» ստացված ինֆորմացիան՝ արդիակա-նացված փորձն է, որն արտահայտվում է նոր միջերի կամ, եթե փոփոխու-թյունները ստանում են հեղափոխական բնույթ, նոր դիցաբանական համակարգի միջոցով: Նոր դիցաբանական համակարգն իր հետ բերում է նոր ծեսերի ձեւավորում, որոնց միջոցով էլ համակարգի միջերն իրացվում են հասարակության մշակութային միջավայրում, նրա առօրյա գործու-նեության մեջ:

\* \* \*

Քաղաքակրթական համատեքստում մշակութային ադապտացման խնդրի ուսումնասիրության առումով, որպես էական նշանակություն ունեցող կադապար, որն առավել հաճախ է օգտագործվում հիմնարար արժեքների փոխառման եւ յուրացման համար, դիտարկվում է *միմեսիսը*:

«Միմեսիս» հասկացությունը հնագույն հունական կրոնա-դիցա-բանական համակարգի կարեւոր տարրերից է. այն նշանակում է իրա-կանության կրկնօրինակում, այսինքն՝ այնպիսի գործողությունների կամ իրադարձությունների ընդօրինակում, որոնց վերակրկնումը կամ վերստին նույնությամբ իրականացումը ապահովում է տիեզերքի անքակտելիու-թյունը եւ շրջապատյալ վերադրսեւորումը:

Միմեսիսի միջոցով, այսինքն՝ կրկնօրինակելով եւ խաղարկելով որեւէ միջ՝ ներկայացնելով վերջինիս մեջ տեղի ունեցող իրադարձությունները, երեւույթները, դիցաբանական հերոսներին եւ այլն, իրականացվում է ծեսը:

Սակայն կարեւորն այստեղ այն է, որ միմեսիսի միջոցով կրկնվում է այն, ինչն ունի սկզբունքային, հիմնարար նշանակություն, եւ միմեսիսը հնարավոր է միայն այն ժամանակաշրջաններում, երբ դեռ չի ստեղծվել հասկացություն առարկայի մասին, երբ առարկան ներկայացվում կամ արտահայտվում է կրկնօրինակումով: Կրկնօրինակումը գիտակցվում է ոչ թե որպես կեղծիք, սուտ, այլ որպես անցած իրական գործողության «տեղափոխում» ներկա ժամանակ: Կրկնվում են միջի մի քանի մշտա-կայուն բնույթ ունեցող հատկանիշները եւ դրանով իսկ վերապրվում է նույն իրավիճակը:

\* \* \*

Վերը շարադրվածը թույլ է տալիս փորձ կատարել՝ այս դիրքերից վերլուծել հայ ժողովրդի պատմության մի կարեւորագույն պահ, երբ այդ ժամանակաշրջանի (քրիստոնեության ընդունման) հասարակությունը փորձում է իր պատասխանը գտնել *մարտահրավերին*:

Պետական կառույցների քայքայման պայմաններում, քաղաքակրթական կառույցները, պիտանի չլինելով զտելու դրսից եկող քաղաքակրթական հոսանքի բերած արտաքին արժեքները, միջերը, ծեսերը, դրանց զգալի մասը անխոչընդոտ բաց էին թողնում դեպի ժամանակի հայ հասարակության մշակութային «միջնաբերդը», ինչն անպաշտպան էր դարձնում նաեւ ավանդական արժեքային համակարգը:

Ըստ Լեոյի, «...Հայաստանը միանգամայն արգավանդ հող էր ներկայացնում մտավոր, գաղափարական շարժումների համար. այստեղ էլ մշակվում էին ինքնուրույն, անկախ աշխարհայեցողություններ, կրոնական-փիլիսոփայական դրոշմներ, որոնք համապատասխանում էին ժամանակի պահանջներին եւ բխում էին նրանցից»:

Այն, ինչը մեծանուն պատմաբանն անվանում է «արգավանդ հող», իրականում ներքին պաշտպանական կառույցների քայքայման եւ թուլացման հետեւանք էր, ինչը վտանգի տակ էր դնում տվյալ ժամանակահատվածում ձեւավորված հայոց միասնությունն ապահովող արժեքային համակարգի հիմնարար տարրերը:

Տվյալ դեպքում հետաքրքիր են ոչ այնքան քրիստոնեության հաղթանակի պատմական նախադրյալները, որքան այն ճանապարհը, մեթոդը, որի շնորհիվ քրիստոնեությունը դարձավ ոչ միայն մոնոթեիստական հավատ հայ ժողովրդի համար, այլ նաեւ, ստեղծելով եկեղեցի՝ յուրացված, հայկականացված պաշտպանական քաղաքակրթական կառույց, որը հետագա դարերում կատարեց ազգապահպան առաքելություն:

Գրիգոր Լուսավորչի վարդապետության մասին պատմող 5-րդ դ. հայ պատմիչների հաղորդած նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս հիմնավորել մի տեսակետ, համաձայն որի հայ ժողովրդի պատմական եւ հասարակական գիտակցության մեջ քրիստոնեության արմատավորումը իրականացվել է *միմեսիսի* միջոցով:

Այն հատկանիշները, որոնք թույլ են տալիս առաջ քաշել միմեսիսի առկայությունը հայերի կողմից պետականորեն քրիստոնեությունն ընդունելու գործընթացի մեջ, պարունակվում են այդ իրադարձության մասին պատմող միջնադարյան հայ պատմական ավանդության դիցաբանական սյուժեներում, որոնց համադրումը համաքրիստոնեական

ավանդության սյուժեների հետ թույլ է տալիս որոշ հետաքրքիր եզրակացությունների գալ:

Վերը նշված վարկածի ապացույցների համակարգի կարելորագույն մասը Հիսուս Քրիստոսի եւ Գրիգոր Լուսավորչի կերպարների ֆունկցիոնալ եւ կառուցվածքային նմանություններն են: Սրան պետք է ավելացնել նաեւ Պողոս/Սավուղի եւ Տրդատի կերպարների նմանությունը:

Ազաթանգեղոսի Պատմությունն սկսվում է Պարթեւ Արշակունիների անկման ու Սասանյանների՝ իշխանությունը նվաճելու մասին պատմող սյուժեով: Հայ Արշակունիների տոհմին պատկանող Խոսրով արքան իր տոհմակիցների վրեժը լուծելու նպատակով ներխուժում է Պարսից թագավորություն: Չկարողանալով դիմադրել Խոսրովի բանակի հարվածներին՝ Սասանյան Արտաշիրը Հայաստան է ուղարկում Անակ Պարթեւին, որը դավադրաբար սպանում է Խոսրովին: Անակի ամբողջ տոհմը կոտորում են իրենց արքայի վրեժը լուծող Խոսրովի զինակիցները, եւ միայն Գրիգոր անունով մի մանկան կարողանում են փախցնել-տանել Կեսարիա:

Գրիգորի կենսագրության այս դրվագը համեմատելի է Հուդայի Հերոդոտես թագավորից սպառնացող մահվանից Հիսուսին Եգիպտոս փախցնելու դրվագի հետ: Ընդհանուր առմամբ, միակ մանկանը, այսինքն՝ ընտրյալին մահից փրկելու նպատակով փախցնելը շատ տարածված մոտիվ է դիցաբանության եւ ժողովրդական բանահյուսության մեջ: Օրինակ, Մովսեսի հետ կապված սյուժե: Գալատացիքը կամ Բարձրյալի կամքը փրկում են նրան, քանի որ ընտրյալին սպասում է առաքելություն՝ աստվածային կամքի իրականացում: Փրկված մանուկի մոտիվը քրիստոնեական դիցաբանության մեջ նոր իմաստավորում է ստանում. մանուկ Հիսուս Քրիստոսը ոչ միայն դառնում է համաշխարհային իմաստության նշան, այլեւ՝ պատմական ժամանակի համատեքստում, նրա ծնունդն իսկ հավանում է հայտնանշել դիցաբանական ժամանակաշրջանի «ավարտը» եւ նոր դարաշրջանի սկիզբը: Ուստի այս մոտիվի առկայությունը Գրիգոր Լուսավորչի հետ կապված սյուժեներում ունի հատուկ նշանակություն, քանի որ օժտում է այդ միջոցները երկու ժամանակահատվածներն իրարից անջատելու, նոր ժամանակների սկիզբ ավետելու հատկությամբ:

Նոր Կտակարանում Քրիստոսի քարոզի ու տանջանքների եւ Ազաթանգեղոսի մոտ նկարագրվող՝ Գրիգորի մասին հատվածների համեմատության արդյունքում կարելի է առանձնացնել նմանությունների երեք հիմնական խումբ՝ արժեքային, կառուցվածքային եւ խորհրդանշային:

Ստորեւ ներկայացվում են վիրապ իջնելու եւ խաչ բարձրանալու միջոցներին ակներեւ նմանությունից բխող՝ դիցաբանական իմաստ ունեցող իրադարձությունների համեմատական երկու շղթա:

*Քրիստոս՝ Տանջանք – Խաչ – Մահ – Հարություն:*

*Գրիգոր՝ Տանջանք – Վիրապ իջնել – Վիրապում գտնվել – Վիրապից դուրս գալ:*

Նշված միջոցներին բաղադրիչների համեմատական ուսումնասիրությունը բացահայտում է այն դիցաբանական իմաստները, որոնք թույլ են տալիս նույնացնել կամ, առնվազն, մասնեցնել այդ տարրերը, ինչը, հաշվի առնելով շարքերի համանմանությունը, տրամաբանական է:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ Գրիգորի վիրապ նետվելու միջոցները կառուցված է որպես համարժեք Քրիստոսի խաչ բարձրանալու միջոցներին:

Վիրապն այն վայրն է, որը կյանք-մահ ցիկլային անցումներում սահմանային դեր է խաղում: Նույնպիսի դեր է կատարում խաչը: Վիրապը եւ խաչն ունեն նաեւ ծնունդ եւ հուղարկավորում նշանակությունը: Երկուսն էլ գիտակցվել են որպես կապ ստորին եւ վերին հարթությունների միջեւ:

Կա նմանության մեկ այլ հարթություն եւս. խաչին էին բարձրացվում եւ վիրապ էին նետվում ամենածանր «հանցանք» կատարած հանցագործները: Հարկ է նշել, որ «խաչ» եւ «վիրապ» հասկացությունները, որպես միջոցներ, կրում են նաեւ մեկ այլ իմաստ, այն է՝ վերածնունդ:

Նույն նմանություններին ենք հանդիպում *վիրապում գտնվել (Գրիգոր)- խաչի վրա մահանալ (Քրիստոս), վիրապից դուրս գալ (Գրիգոր)- հարություն առնել (Քրիստոս)* զույգերում:

Այսպիսով, կարելի է ասել, որ գտնվելով քաղաքակրթական նոր դարաշրջանի ձեւավորվող միտումների եւ ներագոյող գործոնների ներթափանցման գոտում, հայ մշակույթը սկսեց ձեւավորել իր ադապտացման մեխանիզմները: Նա դա արեց վերը նկարագրված մոդելին համապատասխանող գործընթացների միջոցով. դիմեց «բացարձակ գրադարան», վերցրեց այնտեղից նոր արժեքային համակարգի հիմնական միջոցները, *միմենսիսի* ճանապարհով յուրացրեց, հայկականացրեց դրանք, որոնց հիման վրա ստեղծեց իր ծիսային կարգը՝ Հայ Առաքելական եկեղեցի կենտրոնով, ձեւավորեց այդ ծիսային կարգին համապատասխանող մշակութային միջավայրը, որի արդյունքում էլ ձեւավորվեց «հայ քրիստոնյան», այսինքն՝ այն մարդը, որը գործում էր իր համար արդեն հարազատ դարձած նոր քաղաքակրթական հարթության մեջ եւ նոր քաղաքակրթական դարաշրջանին հատուկ գիտակցության շրջանակներում:

**ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԱՂՐԲԵՋԱՆԻ ՈՒԺԱՅԻՆ  
ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ  
Սարգիս Հարությունյան**

**Ազգային անվտանգության նախարարություն**

Աղբբեջանի նախագահ Իլիամ Ալիեւի 2004թ. հուլիսի 23-ի հրամանագրով պաշտոնանկ արվեց այդ երկրի Ազգային անվտանգության նախարարությունը (ԱԱՆ) 1994թ. գլխավորող Նամիկ Աբասովը: Նրա փոխարեն այդ պաշտոնում նշանակվեց գնդապետ Էլդար Մախմուդովը (նրան միաժամանակ շնորհվեց գեներալ-մայորի կոչում), որը մինչ այդ գլխավորում էր Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) Թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչությունը (մինչ այդ Մախմուդովը ղեկավարել է ՆԳՆ Տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունը, որը հետագայում վերացվեց):

Մախմուդովի նշանակմանը հետեւեցին նոր նշանակումներ. 2004թ. ամռան ընթացքում Աղբբեջանի ՆԳՆ համակարգից ԱԱՆ «տեղափոխվեցին» հետեւյալ անձինք՝

❖ Բաբու քաղաքի ոստիկանության գլխավոր վարչության Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի բաժնի պետ Խիլալ Ասադովը նշանակվեց Աղբբեջանի ԱԱՆ Ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ,

❖ ՆԳՆ Թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության պետի տեղակալ, գնդապետ Ալիմուսա Ալիեւը դարձավ ԱԱՆ Կադրերի վարչության պետ,

❖ ՆԳՆ-ից մեկ այլ սպա՝ գնդապետ Ֆարիադ Վահաբովը, գլխավորեց ԱԱՆ աշխատակազմը:

2005թ. փետրվարի 12-ին հայտնի դարձավ, որ Աղբբեջանի ԱԱՆ Ռազմական հակահետախուզության գլխավոր վարչության պետ Էլման Գամբարովը սեփական դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ տեղափոխվել ՊՆ: Գամբարովի տեղը ժամանակավորապես զբաղեցրել է նույն վարչության բաժիններից մեկի ղեկավար, գնդապետ Նիզամի Շիրինովը:

Դեռևս իր կենդանության ժամանակ Ադրբեջանի նախագահ Չեյդար Ալիևը որոշակի փոփոխություններ անցկացրեց երկրի ուժային համակարգերում: Նրա օրոք Ռազմական հակահետախուզության ծառայությունը մտցվեց Ադրբեջանի ԱԱՆ համակարգի մեջ, սակայն այդ համակարգից դուրս բերվեց Սահմանապահ զորքերի վարչությունը, որը հետագայում ձեւափոխվեց Պետական սահմանապահ ծառայության:

Ըստ որոշ տեղեկությունների, այդ փոփոխությունների հիմնական նպատակն էր՝ թուլացնել Ադրբեջանի ԱԱՆ-ը բավականին երկար ժամանակ գլխավորող Նամիկ Աբասովի ազդեցությունը նախարարությունում: Հայտնի է, որ Աբասովը եւ Ռազմական հակահետախուզության ծառայության այն ժամանակվա պետ էլման Գամբարովը բավականին վատ հարաբերությունների մեջ էին: Էլման Գամբարովը, որ համարվում էր Ալիևների մերձավոր մարդկանցից, կարող էր ոչ միայն ներսից հսկել ԱԱՆ-ը եւ անձամբ Նամիկ Աբասովին, այլեւ՝ Չեյդար Ալիևի մահվանից հետո կանխել Աբասովի հավանական հակաիլիամական քայլերը: Իսկ սահմանապահ զորքերի դուրսբերումը միանշանակորեն փոքրացնում էր ԱԱՆ զուտ ռազմական ուժի կարողությունները, որի տրամադրության ներքո էին մնալու միայն հատուկ նշանակության ուժերը:

Եթե շարժվենք այս տրամաբանությամբ, ապա էլման Գամբարովի տեղափոխումը Ադրբեջանի ՊՆ, թերեւս, նպատակ է հետապնդում մեծացնել Իլհամ Ալիևի անձնական ազդեցությունը երկրի զինված ուժերում եւ վերահսկողությունը պաշտպանության նախարար Սաֆար Աբիևի նկատմամբ: Պետք չէ բացառել, որ առաջիկայում Գամբարովին ՊՆ-ում շնորհվի որեւիցե բարձր պաշտոն՝ հետագա աճի հեռանկարով:

### **Զինված ուժեր**

Սույն թվականի հունվարի 13-ին ադրբեջանական «Ձերկալո» թերթում Ադրբեջանի Պաշտպանության նախարարության (ՊՆ) ռազմագիտական կենտրոնի նախկին աշխատակից, գնդապետ-լեյտենանտ Ուզեիր Ջաֆարովը նշում է, թե 2004թ. դեկտեմբերին ձերբակալվել են Ադրբեջանի Բարդայի եւ Շամխորի զինվորական կորպուսներում ծառայող մի շարք բարձրաստիճան սպաներ, բացի այդ, իջեցվել են մի քանի տասնյակ սպաների զինվորական կոչումները եւ պաշտոնները: Ըստ Ջաֆարովի, ձերբակալվածների թվում էին Բարդայի կորպուսի կազմակերպչական-մոբիլիզացիոն բաժնի պետ, գնդապետ-լեյտենանտ Վազիֆ Թալիբովը, նույն կորպուսի զորամասերից մեկի հրամանատար, գնդապետ-լեյտենանտ Զիա Նաջաֆովը եւ այլք:

Իջեցվել էր Բարդայի կորպուսի զորամասերից մեկի այլևս նախկին հրամանատար եւ նախկին գնդապետ Բալայ Նասիբովի կոչումը: Վերջինս տեղափոխվել էր ՊՆ Քաղաքացիական պաշտպանության բաժին, սակայն թե՛ Նասիբովի, թե՛ դաստիարակչական հարցերով նրա տեղակալ, մայոր Շայիդ Խալիլովի նկատմամբ հարուցվել էր քրեական գործ. սույն թվի հունվարի դրությամբ գործը քննվում էր Ղարաբաղի կայազորի դատարանում:

Թեեւ այդ ձերբակալությունների եւ իջեցումների հիմնական պատճառ Ջաֆարովը (ինչպես նաեւ պաշտոնական հաղորդագրությունները) նշում է կոռուպցիան, սակայն միեւնույն ժամանակ նա այդ իրադարձությունները կապում է Բարդայի կորպուսի նախկին հրամանատար, զեներալ-մայոր Գաբիլ Մամեդովի անձի հետ: Հիշեցնենք, որ 2004թ. մարտին Իլհամ Ալիևի հրամանագրով Մամեդովն ազատվել էր կորպուսի հրամանատարի պաշտոնից եւ հետագայում նշանակվել Ղազախստանում Ադրբեջանի դեսպանության ռազմական կցորդ:

Ուշագրավ է, որ, ըստ առկա տեղեկությունների, որոշ ժամանակ անց ձերբակալված սպաները ցուցնունք են տվել, թե կոռուպցիայով զբաղվել են Մամեդովի հրահանգներով: Մամեդովի «գիծն» էլ ավելի ամրապնդվեց, երբ Բաքվում կայացած ասուլիսի ժամանակ ՊՆ մամլո ծառայության աշխատակից Իլդար Վերդիեւը չհերքեց, թե որոշ զարգացումների դեպքում չի բացառվում, որ Մամեդովը հետ կանչվի Աստանայից:

Միեւնույն ժամանակ, լրատվամիջոցների համաձայն, ադրբեջանական զինված ուժերի (ՁՈւ) որոշ շրջանակներ համոզված են, թե ձերբակալությունները եւ ընդհանրապես՝ ՁՈւ-ում Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարության ծավալած հետաքննչական գործունեությունը պայմանավորված են 2003թ. հոկտեմբերի 15-ի նախագահական ընտրություններով: Նշենք, որ ըստ շրջանառվող լուրերի, այդ ընտրությունների ժամանակ Բարդայի եւ մի շարք այլ կորպուսների զինվորականության մի զգալի մասն իր ձայնը տվել է ընդդիմադիր «Մուսավաթ» կուսակցության ղեկավար Իսա Ղամբարին: Այդ փաստն իսկական շոկ էր առաջացրել երկրի ղեկավարության մեջ: Ընտրություններից հետո Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը փորձել էր պաշտոնանկ անել վերոհիշյալ Բալայ Նասիբովին, որն այն ժամանակ Բարդայի կորպուսի զորամասի հրամանատարն էր, սակայն Նասիբովի օգտին էին հանդես եկել զեներալ-մայոր Գաբիլ Մամեդովը եւ Ադրբեջանի ՊՆ հանգուցային վարչություններից մեկի պետ Թալիբ Մամեդովը: Պաշտպանության նախարարը ստիպված էր եղել զիջել, սակայն, ինչպես նշեցինք, 2004թ. մարտին Գաբիլ Մամեդովը պաշտոնանկ արվեց եւ որոշ ժամանակ ՊՆ Կաղ-



րերի վարչության տրամադրության ներքո գտնվելուց հետո նշանակվեց Ղազախստանում Ադրբեջանի դեսպանության ռազմական կցորդ, իսկ Թալիբ Մամեդովը՝ Պակիստանում Ադրբեջանի ռազմական կցորդ:

Ի դեպ, հարկ է նշել, որ ըստ նույն շրջանառվող լուրերի, 2003թ. հոկտեմբերին կայացած նախագահական ընտրությունների ժամանակ Բաքվի մոտ գտնվող մի շարք զորամասերի մի քանի հազար զինվորականներ դարձյալ քվեարկել էին Իսա Ղամբարի օգտին: Եվ արդեն ընտրությունների հաջորդ օրը՝ հոկտեմբերի 16-ին, այդ զորամասերի հրամանատարներն ազատվել էին իրենց զբաղեցրած պաշտոններից:

Սեկ այլ տեղեկության համաձայն, դեռևս նախագահական ընտրությունների նախօրեին, ի շարս այլ բարձրաստիճան զինվորականների, գեներալներ Թալիբ Մամեդովը, Գաբիլ Մամեդովը եւ գնդապետ Բալայ Նասիբովը եղել էին Իլհամ Ալիևի մոտ կազմակերպված ընդունելությունների: Եվ ըստ այդ տեղեկության, բացառված չէ, որ նրանց «չեզոքացման» հիմքում ընկած լինեն այդ ընդունելությունների ժամանակ արտահայտված «չափից դուրս ազատ» մտքերը՝ կապված Ադրբեջանի բանակում տիրող իրավիճակի հետ:

### **Յետեւություններ**

Գալով իշխանության գլուխ՝ Իլհամ Ալիևը, ըստ էության, ուներ բավականին լուրջ խնդիր՝ հորից իրեն ժառանգություն էին մնացել ուժային կառույցներ, որոնցում Ալիև-կրտսերն ուներ սահմանափակ ազդեցություն: Ազդեցության հիմնական մեխանիզմը՝ «սեփական մարդը» համակարգում, Իլհամ Ալիևի մոտ բացակայում էր, քանի որ ուժային այդ կառույցները ղեկավարում էին հոր՝ Յեյդար Ալիևի մարդիկ: Ուստի փոփոխություններն ուժային կառույցներում մաս կազմեցին ադրբեջանական իշխող վերնախավը «թարմացնելու» Ալիև-կրտսերի նախաձեռնության:

Այդ առումով Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարությունը պետք էր համարել առաջնային օբյեկտ: Շուրջ տասը տարի ադրբեջանական ԱԱՆ-ը ղեկավարող Նամիկ Աբասովը, որի անձի հետ կապված Բաքվի եւ արտերկրի մամուլում ժամանակ առ ժամանակ հայտնվում էին ուշագրավ տեղեկություններ (ընդհուպ, որ նա նպատակ ունի դառնալ Ադրբեջանի նախագահ), բնականաբար, չէր կարող ձեռք տալ Իլհամ Ալիևին: Համարվում էր, որ ԱԱՆ հանգուցային պաշտոններում նշանակված էին անձամբ Աբասովի մարդիկ, ինչը հանգեցրել էր այդ կառույցում Ադրբեջանի նախագահների ազդեցության սահմանափակմանը:

Գոյություն ունի նաև այլ հանգամանք: Հայտնի էին Նամիկ Աբասովի հակասությունները Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթեբեյի հետ, որոնք ժամանակ առ ժամանակ վերածվում էին բաց հակամարտության: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ Ադրբեջանի Ազգային անվտանգության նոր նշանակված նախարար Էլդար Մախմուդովը ծագումով Նախիջևանի Շարուրի շրջանից է (Նախիջևանյան կլանի շարուրյան խմբավորում): Համարվում է, որ շարուրյան խմբավորումը գլխավորում է Ռամիզ Մեհթեբեյը: Հիշեցնենք, որ Նամիկ Աբասովը հանդիսանում էր նախիջևանյան կլանի օրդուբադյան (Օրդուբադի շրջան) խմբավորման ղեկավարը: Ընդհանուր հետեւությունն է՝ պայքարում Մեհթեբեյը հաղթեց Աբասովին:

Թերեւս, ադրբեջանական բանակում տեղի ունեցած ձերբակալությունները կարելի է դիտարկել զինված ուժերում ընդդիմադիր «Մուսավաթ» կուսակցության թեկուզ սահմանափակ ազդեցության վերացման լույսի ներքո: Սակայն հարկ է ուշադրություն դարձնել նաև հետեւյալ կետերին.

❖ պետք չէ բացառել, որ, իրոք, Բաքվի իշխանությունները սեփական զինված ուժերի մակարդակը բարելավելու նպատակով պայքար են սկսել այնտեղ առկա հսկայածավալ կոռուպցիայի դեմ, ինչը մտնում է ադրբեջանական բանակի մարտունակությունը բարձրացնելու Իլհամ Ալիևի հայտարարած ծրագրերի մեջ,

❖ վերոհիշյալ ձերբակալությունները եւ պաշտոնանկությունները կարող են վկայել նաև Ադրբեջանի պաշտպանության նախարարին փոխելու Ալիև-կրտսերի ծրագրի մասին. ուշադրության է արժանի այն փաստը, որ ստուգումները անց են կացրել ոչ թե ադրբեջանական ՊՆ-ի Տեսչական գլխավոր վարչության աշխատակիցները, այլ՝ գլխավորապես ԱԱՆ ներկայացուցիչները (այդ առումով հարկ է հիշեցնել նաև Ադրբեջանի ԱԱՆ Ռազմական հակահետախուզության գլխավոր վարչության պետ Էլման Գամբարովի «տեղափոխումը» ՊՆ):

Եվ վերջապես, Ադրբեջանի ուժային կառույցներում տեղի ունեցող փոփոխությունների համատեքստում պետք է դիտարկել նաև Ադրբեջանի Արդարադատության նախարարության դատական որոշումների կատարման գլխավոր վարչության պետ, նույն նախարարության փոխնախարար Այդին Գասիմովի պաշտոնանկությունը (ազատվել է զբաղեցրած պաշտոնից համաձայն Իլհամ Ալիևի 2005թ. հունվարի 28-ի հրամանագրի): Պաշտոնանկ էին արվել նաև այդ վարչության մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ:

Այսպիսով, Ադրբեջանի ուժային կառույցներում 2004թ. սկսված փոփոխությունների թիվ մեկ նպատակն, ըստ ամենայնի, Ալիև-կրտսերի բացարձակ վերահսկողության հաստատումն է այդ կառույցների նկատմամբ: Պետք է ենթադրել, որ սույն գործընթացը, թերևս, վերջնական տեսք ձեռք կբերի այս տարվա նոյեմբերին կայանալիք խորհրդարանական ընտրություններից հետո, եթե, իհարկե, մինչ այդ «վարդա-նարնջագույն ալիքը» չձածկի Ադրբեջանը:

## **ԱՂՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ**

### **Կարեն Վերանյան**

Աղբբեջանի քաղաքականության գերակայություններից է զինված ուժերի մարտունակության բարձրացումն ու արդիական տեխնիկայով համալրումը: Այս նպատակով Բաքվի իշխանությունները տարեցտարի ավելացնում են երկրի պետբյուջեում ռազմական ծախսերի ծավալները: 2005թ. Աղբբեջանի պետբյուջեի հաստատված նախագծում ընդհանուր ծախսերի չափաբաժինը կազմել է շուրջ \$2 մլրդ, որից ռազմական ոլորտին էր նախատեսվում տրամադրել շուրջ \$250 մլն, ինչը, ըստ միջազգային աղբբյուրների, մոտ 35%-ով ավելին է, քան 2004թ. ռազմական բյուջեն եւ 50%-ով ավելի, քան այդ ոլորտին հատկացրել էր պաշտոնական Բաքուն 2003թ.: Նշենք, որ հրապարակված թվերի համաձայն, 2005թ. Հայաստանի ռազմական ծախսերը կազմելու են մոտ \$130 մլն, որի մեջ, բնականաբար, չեն մտնում Արցախի զինված ուժերին հատկացվող միջոցները:

Պետք է հաշվի առնել նաեւ այն հանգամանքը, որ առաջիկա ժամանակաշրջանում ռազմական ծախսերը հարեւան Աղբբեջանում գրանցելու են աճի միտում: Մասնավորապես, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շահագործման դեպքում, որի աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2005թ. վերջին, աղբբեջանական իշխանությունների համար հնարավորություն է ստեղծվում ընդլայնել բյուջետային եկամուտները, որտեղ կարելի էրազույն տեղ կհատկացվի նաեւ ռազմական ծախսերին:

### **Աղբբեջան-ԱՄՆ ռազմական համագործակցությունը**

Պաշտոնական Վաշինգտոնն իր հարավկովկասյան քաղաքականությունում կարելորում է Աղբբեջանի հետ համագործակցությունը՝ քաղաքական, տնտեսական եւ ռազմական տեսանկյունից: Իրանա-ամերիկյան ներկայիս լարված հարաբերությունների համատեքստում Աղբբեջանը կարելոր նշանակություն է ձեռք բերում Միացյալ Նահանգների համար: Միաժամանակ, երկկողմ համագործակցության խորացումը հնարավորություն կստեղծի թուլացնել տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերը:

Ներկայումս պաշտոնական Վաշինգտոնը տարբեր մակարդակներում բանակցություններ է վարում աղբբեջանական կողմի հետ՝ երկրի ռազմական օդանավակայանները ամերիկյան զորքերին տրամադրելու հարցի

շուրջ: Ի դեպ, ԱՄՆ կառավարությունը մեկ անգամ չէ, որ հանդես է եկել Ադրբեջանի ռազմական օդանավակայանների արդիականացման ու վերակառուցման պատրաստականությամբ: Հարցի հետ կապված՝ արդեն 2002թ. վերջից տարբեր լրատվամիջոցներում լուրեր հայտնվեցին Ադրբեջանում ամերիկյան ռազմականների հավանական տեղադրման մասին: Ավելին, 2003թ. դեկտեմբերի սկզբին Ադրբեջանում էր գտնվում ամերիկացի ռազմական մասնագետների պատվիրակությունը, որը զբաղվում էր երկրի ռազմական օդանավակայանների տեխնիկական հնարավորությունների ուսումնասիրմամբ: Նրանք հանգամանորեն ուսումնասիրության ենթարկեցին մասնավորապես Քյուրդամիրում, Նասոսնի եւ Գալայի ավաններում գտնվող ռազմական օդանավակայանները:

Սակայն Ադրբեջանի ռազմական օդանավակայանների խնդրով ամերիկացիները հետաքրքրվում էին դեռևս 2001թ. սկսած: ԱՄՆ առաջատար վերլուծական կենտրոններից մեկը՝ «ՌԵՆԴ քորփորեյշնը», Միացյալ Նահանգների ռազմական հետախուզության պատվերով ժամանակին պատրաստեց զեկույց՝ նվիրված Հարավային Կովկասի երկրների ռազմական օդանավակայանների շահագործման հնարավորություններին: Փաստաթղթի համաձայն, Հարավային Կովկասում գոյություն ունի ավելի քան 20 օդանավակայան, որոնք համապատասխանում են ամերիկյան չափանիշներին, որոնցից վեցը դասվեցին առաջին եւ երկրորդ կարգի օդանավակայանների շարքին: Ադրբեջանի պարագայում՝ փաստաթղթում հստակեցված էր, որ յոթ օդանավակայաններ համապատասխանում են ԱՄՆ նվազագույն չափանիշներին, իսկ Բինայի եւ Գյանջայի օդանավակայանները ճանաչվեցին համապատասխանաբար առաջին եւ երկրորդ կարգի:

Հարկ է նշել, որ խոսքը վերաբերում է ոչ թե ռազմական հենակայանների տեղադրմանը, այլ ամերիկյան շարժուն (արագ արձագանքման) զորամիավորումների ներկայության հարցին: Ադրբեջանում այդ զորախմբերի հավանական տեղակայումն ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյաները հաճախ դիտարկում են որպես Բաքու–Ջեյհան նավթամուղով կասպյան նավթի արտահանման անվտանգության երաշխիք:

Ավելին, լուրեր տարածվեցին Կասպից ծովում ամերիկյան, այսպես կոչված, լողացող հակահրթիռային սարքավորման տեղակայման մասին, որը հնարավորություն կտար ոչնչացնել, օրինակ, իրանական կամ ռուսական հրթիռները թռիչքի ժամանակ: Իսկ 2004թ. ապրիլի 2-ին «Associated Press»-ը տարածեց մի հաղորդագրություն, ըստ որի ԱՄՆ Հյուսիսային Կարոլինա նահանգում գտնվող «Blackwater USA» ընկերությունը Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարության հետ կնքել է հատուկ մի պայմանագիր, որի համաձայն «Blackwater USA»-ը պետք է

«ստեղծի, վարժեցնի եւ զինի» Ադրբեջանի ռազմածովային ուժերի հատուկ նշանակության ջոկատները:

Ադրբեջանա-ամերիկյան ռազմական համագործակցության հարցը զգալի առնչություն ունի նաեւ հայ-ադրբեջանական հարաբերությունների հետ: Խնդիրն այն է, որ 1993թ. ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց «Ազատության աջակցման մասին» ակտի 907-րդ լրացումը: Համաձայն այդ որոշման, ելնելով այն իրողությունից, որ Ադրբեջանը Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ սահմանել է տրանսպորտային շրջափակում, արգելվում է Ադրբեջանին տրամադրել ուղղակի կառավարական օգնություն՝ ներառյալ ռազմական ոլորտը:

Սակայն 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո պաշտոնական Վաշինգտոնը վերանայեց իր արտաքին քաղաքականությունը: Ակտիվացան ռազմական կապերը Ադրբեջանի ու ԱՄՆ-ի միջեւ: Ադրբեջանի նախկին նախագահ Յեյդար Ալիևն իր լիակատար աջակցությունը հայտնեց Աֆղանստանի դեմ ամերիկյան օդային հարվածներին, ավելին՝ առաջարկեց Վաշինգտոնին օգտագործել իր երկրի օդային տարածքը՝ դեպի Կենտրոնական Ասիա գորքերի փոխադրման նպատակով: Քաղաքական այս գործընթացները հող նախապատրաստեցին վերանայելու 907-րդ լրացումը: 2002թ. հունվարի 25-ին ԱՄՆ նախագահ Ջ.Բուշը թեւ չվերացրեց, այնուհանդերձ, դադարեցրեց դրա կիրառությունը մեկ տարի ժամանակով, իսկ 2005թ. սկզբին երկարաձգեց 907-րդ լրացման պատժամիջոցի դադարեցման մասին հրամանը՝ հայտարարելով, որ պատժամիջոցի դադարեցումը «չի խզի ու չի սառեցնի Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հականարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ համաձայնությունների ձեռքբերման աշխատանքները, իսկ տրամադրվող օգնությունը չի օգտագործվի Հայաստանի դեմ հարձակողական նպատակների համար»:

### **Ռազմական համագործակցությունը Թուրքիայի հետ**

Ադրբեջանի ղեկավար շրջաններում Թուրքիան մշտապես դիտվել է որպես կարելորագույն ռազմական դաշնակից: Կարելի է ասել, որ Ադրբեջանի զինված ուժերի նյութատեխնիկական համալրման, ֆինանսական աջակցության խնդիրներում Թուրքիան ԱՄՆ-ին գրեթե չի զիջում:

Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը Բաքուն կարելորում է հիմնականում երկու տեսանկյունից: Նախ՝ Թուրքիան էական ազդեցություն կարող է ունենալ տարածաշրջանում ռազմական հավասարակշռության փոփոխման համատեքստում: 2001թ. մարտի 15-ին աշխատանքային այցով Ադրբեջանում գտնվող Թուրքիայի զինված

ուժերի Գլխավոր սպայակույտի Ռազմավարական ծրագրերի վարչության պետ Նուրեշ Թաշղևերի հետ հանդիպման ընթացքում Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիելը հայտարարեց. «Մենք ցանկանում ենք, որ Թուրքիան այս տարածաշրջանում գործի առավել ակտիվորեն: Թուրքական եւ ադրբեջանական՝ միեւնույն ազգության երկու առանձին զինված ուժերը մեր համընդհանուր թշնամու՝ Յայաստանի դեմ պետք է գործեն համատեղ, եւ դա աքսիոն է»: Երկրորդ, Թուրքիայի՝ որպես ՆԱՏՕ կարելուր անդամ պետության հետ ռազմական ոլորտում համագործակցության խորացումը կնպաստի Ադրբեջանի՝ Յյուսիսատլանտյան դաշինքին ինտեգրման գործընթացին:

Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ ռազմական համագործակցության հիմքերը դրվել են դեռեւս 1992թ. օգոստոսին ստորագրված պայմանագրով, որն ամրապնդվեց նաեւ 1996թ.: Ըստ պայմանագրի, ռազմական ոլորտում երկկողմ համագործակցության այլ խնդիրներից զատ, Ադրբեջանում մշտական կարգավիճակով գործելու էին թուրք ռազմական խորհրդատուները (շուրջ 70 սպա): Դեռեւս 1990-ական թթ. վերջին տարբեր լրատվամիջոցներ գրեցին այն մասին, թե պաշտոնական Բաքուն մտադիր է Թուրքիայից ձեռք բերել F-16 տեսակի կործանիչներ: Յարկ է նշել նաեւ, որ ի վերջո Ադրբեջանին բաժին հասավ Գերմանիայի կողմից Անկարային տրամադրված նախկին ԳԴՀ զինտեխնիկան:

Երկու երկրների միջեւ ռազմական ակտիվ համագործակցությունն իրականացվում է նաեւ խաղաղապահ ուժերի, ռազմական կադրերի վերապատրաստման ուղղություններով: Ըստ որոշ աղբյուրների, Թուրքիայի ռազմաուսումնական հաստատություններում շուրջ 20 ռազմական մասնագիտական ուղղություններով ուսանում են ավելի քան 450 ադրբեջանցի զինծառայողներ: Կոսովոյում թուրք խաղաղապահ գումարտակի շարքերում իրենց ծառայությունն են անցկացնում նաեւ ադրբեջանցի զինծառայողներ:

### **Ադրբեջանա-ուկրաինական ռազմական կապերը**

Միացյալ Նահանգներից եւ Թուրքիայից զատ, պաշտոնական Բաքուն ակտիվ ռազմական համագործակցություն է հաստատել նաեւ Ուկրաինայի հետ: Ադրբեջանն ու Ուկրաինան տնտեսական եւ ռազմատեխնիկական բնագավառներում համագործակցում են նաեւ ՎՈՒՈՒԱՄ-ի շրջանակներում (ըստ որոշ տվյալների, ուկրաինա-ադրբեջանական ռազմատեխնիկական համագործակցության տարեկան ծավալները հասնում են \$20-30 մլն-ի): 1995թ. ստորագրվեց երկկողմ համաձայնագիր, ըստ որի Ադրբեջանի իշխանությունները՝ նավթի եւ նավթամթերքի մատակարարման

դիմաց, Ուկրաինայից ձեռք էին բերում սպառազինություն և զինամթերք: Համագործակցության այս շրջանակներում Ուկրաինայում վերանորոգվում են Ադրբեջանի սպառազինությունները և ռազմական տեխնիկան: Հարկ է նշել, որ դեռևս դարաբաղյան պատերազմում Ուկրաինան շոշափելի նյութատեխնիկական աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանին: Ընդ որում, մատակարարվող սպառազինության մի մասն էլ, ըստ որոշ աղբյուրների, առաքվում էր Նախիջևան: 1998թ. Հայաստանի ԱԳՆ պաշտոնական հայտարարության համաձայն, 1993-1995թթ. Ադրբեջանը Ուկրաինայում գնել է վերանորոգել է շուրջ 150 տանկ, ինչը թույլ տվեց Ադրբեջանին կրկնակի ավելացնել ծանր զրահատեխնիկայի քանակը:

2005թ. փետրվարի 18-ին ադրբեջանական «Ջերկալո» էլեկտրոնային կայքէջում տեղ գտած հաղորդագրության համաձայն, Ադրբեջանում Ուկրաինայի դեսպան Անատոլի Յուրչենկոյի խոսքերով, պաշտոնական Կիևը նախատեսում է սույն թվականի մայիսին Ադրբեջանին վաճառել Ա՛ - 140 և Ա՛ - 100 տեսակի և 4 ինքնաթիռ՝ ի հավելումն նախկինում տեղ գտած նման մատակարարումների:

Ընդհանրապես պետք է կարծել, որ Յուրչենկոյի իշխանության զլուխ անցնելուց հետո ուկրաինա-ադրբեջանական և ուկրաինա-վրացական համագործակցությունները ռազմական ոլորտում նոր թափ կստանան: Օրինակ, ս.թ. մարտի սկզբին երկօրյա այցով Կիև էր ժամանել Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Գելա Բեժուաշվիլին: Ուկրաինայի պաշտպանության նախարար Անատոլի Գրիցենկոյի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ ռազմական կապերի խորացման, ուկրաինացի մասնագետների կողմից Վրաստանի ռազմական տեխնիկայի վերանորոգման և այլ հարցեր: Բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ուկրաինական ռազմական ուսումնարաններում Վրաստանի զինված ուժերի կադրերի պատրաստման հարցի շուրջ:

### **Ռազմական համագործակցությունը Պակիստանի ու Իսրայելի հետ**

Բավականին սերտ ու բնականոն են ընթանում նաեւ ադրբեջանա-պակիստանյան, ադրբեջանա-իսրայելյան ռազմական հարաբերությունները: Դեռևս 2002թ. սեպտեմբերի կեսերին Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը և նրա պակիստանյան գործընկեր Համիդ Նավազ Խանը ստորագրեցին երկկողմ ռազմական համագործակցության մասին պայմանագիր՝ համատեղ զորավարությունների, տեղեկատվության և հիմնական կազմի փոխանակումների, զիտական և արդյունաբե-



րական փորձարկումներում մասնակցության հարցերի շուրջ: Իսկ 2004թ. օգոստոսին պաշտոնական այցով Բաքվում էր գտնվում Պակիստանի Միացյալ սպայակույտերի հանձնաժողովի պետ, գեներալ Մուհամեդ Ազիզ Խանը: Այցելության նպատակն էր երկկողմ ռազմական համագործակցության ընդլայնման հեռանկարները, ինչպես նաև *միմյանց աջակցությունը տարածաշրջանային հակամարտություններում*: Հանդիպումների ընթացքում շոշափվել են նաև ռազմական կադրերի վերապատրաստման, ռազմատեխնիկայի ու սպառազինության մատակարարման հարցեր: Սույն թվականի փետրվարի 11-14-ը Պակիստանի Միացյալ հետախուզական վարչության գլխավոր տնօրեն Աշֆալ Փերվեզ Քայանի հրավերով աշխատանքային այցով Պակիստանում էր գտնվում Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարար Էլդար Մախմուդովը: Վերջինս հանդիպումներ է ունեցել Պակիստանի Իսլամական Հանրապետության Միացյալ սպայակույտերի հանձնաժողովի պետ, բանակի գեներալ Էհսան Ուլ Խագի, վերոհիշյալ Աշֆալ Փերվեզ Քայանի, ներքին գործերի նախարար Աֆթաբ Ահմեդ Խան Շերպաոյի հետ: Բանակցությունների ընթացքում քննարկվել են տարածաշրջանային եւ միջազգային անվտանգությանը վերաբերող, ահաբեկչության եւ թմրադեղերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցեր:

Ադրբեջանա-իսրայելյան ռազմական համագործակցության զարգացման խնդրում կարեւորվում է գլխավորապես Թուրքիայի՝ որպես միջնորդ պետության դերակատարությունը: Իսրայելը կարեւորում է Ադրբեջանի հետ ռազմական համագործակցությունը գլխավորապես Իրանա-իսրայելյան հարաբերությունների համատեքստում: Ավելին, մամուլում քանիցս տեղ են գտել Ադրբեջանի տարածքից Իրանի նկատմամբ իսրայելական «Մոսսադ»-ի հետախուզական գործունեությանը վերաբերող տեղեկություններ:

Դեռևս 1990-ական թթ. սկզբին լրատվամիջոցներում լայն տարածում ստացավ Թուրքիա-Իսրայել-Ադրբեջան առանցքի հավանական ձեւավորման հարցը: 1999թ. դեկտեմբերի սկզբին Բաքու այցելեց Իսրայելի ՊՆ փոխնախարար, բրիգադի գեներալ Եֆրայիմ Սնեյը (ադրբեջանա-ամերիկա-իսրայելյան բարեկամության խմբի համանախագահ): Սնեյի խոսքերով, Ադրբեջանի դերը միջազգային հարթակում աճում է, եւ Իսրայելը շահագրգռված է նրա հետ կապերի ամրապնդման հարցում: Նա նաև նշել է. «Ես մշտապես ձգտում եմ ընկերներիս աջակցությամբ ներազդել 907-րդ լրացման վերացման վրա»: Իսկ 2001թ. դեկտեմբերին մամուլում տեղեկություններ հայտնվեցին Ադրբեջանին «Մերկավա» տեսակի 100 տանկ եւ 30 մարտական ինքնաթիռ մատակարարելու վերաբերյալ՝ Թուրքիայում Իսրայելի ու Ադրբեջանի միջեւ համաձայնության ձեռքբերման մասին:

## **ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

### ***Սեւակ Սարուխանյան***

Այս տարվա մարտի սկզբին Թեհրանում տեղի ունեցավ «Միջուկային տեխնոլոգիա եւ հիմնարար զարգացում» թեմայով կոնֆերանս, որն անցկացվեց Իրանի նախկին նախագահ Ա.Ա.Յաշեմի-Ռաֆսանջանիի աջակցությունը վայելող Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի եւ Իրանի Անվտանգության բարձրագույն խորհրդի հովանու ներքո:

Կոնֆերանսին հրավիրված էին աշխարհի մի շարք հեղինակավոր մասնագետներ եւ առաջնակարգ վերլուծական կենտրոնների ներկայացուցիչներ:

Կոնֆերանսին հատուկ ելույթով հանդես եկավ Իրանի անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Յ.Ռոհանին, որի ելույթի, իսկ ապա՝ մամլո ասուլիսի հիմնական դրույթները հետեւյալն էին.

1. Իրանը երբեք չի հրաժարվի ուրանի հարստացման տեխնոլոգիաների զարգացումից,

2. Իրանը ժամանակավորապես է բանակցում եվրոպական երկրների հետ, եւ այդ բանակցությունների նպատակն է ոչ թե ուրանի հարստացման դադարեցումը, այլ այն, որ եվրոպացիները լավագույնս տեղեկացված լինեն Իրանի խաղաղ միջուկային ծրագրի վերաբերյալ,

3. Իրանը չի բավարարված եվրոպացիների դիրքորոշմամբ,

4. Իրանը կշարունակի համագործակցությունը Ռուսաստանի հետ միջուկային էներգետիկայի ոլորտում:

Կոնֆերանսի առաջին ուշագրավ փաստը Իրանի միջուկային ծրագրին նվիրված «Իրանի միջուկային ծրագիր» հատուկ ֆիլմի ցուցադրումն էր, որն իր անկեղծությամբ եւ ինֆորմացիոն հագեցմամբ անակնկալ եղավ կոնֆերանսին մասնակցող գրեթե բոլոր արտասահմանցի մասնագետների համար:

Իրանական կողմն այդ ֆիլմով հայտարարեց, որ Իրանը նպատակ ունի երկրի տարածքում զարգացնել ամբողջական միջուկային ծրագիր, եւ այդ ծրագրում ատոմային էլեկտրակայանները ընդամենը շատ փոքր մաս են կազմում: Իրանը նպատակ ունի.

1. կազմակերպել ուրանի արդյունահանում. այս աշխատանքներն արդեն իսկ մեծ թափ են առել երկրի տարածքում,

2. կազմակերպել ուրանի կոնցենտրատի ստացում,
3. ստանալ թույլ հարստացված ուրան,
4. ստանալ միջին եւ բարձր հարստացման ուրան,

5. իրանցիները սկսել են «ծանր ջրով» աշխատող 40 մվտ ռեակտորի կառուցումը, որը կարող է վերարտադրել պլուտոնիում, որն իր հերթին կարող է օգտագործվել մեծ հզորությամբ միջուկային զենքի տեսակների ստեղծման համար:

Փաստորեն, այս ծրագրերի իրականացման դեպքում Իրանն առնվազն տեսականորեն հնարավորություն կունենա ստեղծել միջուկային զենք:

Չատկանշական է, որ Իրանն այսօր ունի հսկայական միջուկային ենթակառուցվածք: Մեծ թվով աշխատանքներ իրականացվել են վերջին 5 տարիների ընթացքում, հիմնականում սեփական ուժերի շնորհիվ: Միջուկային կենտրոններում աշխատող մասնագետների զգալի մասը երիտասարդներ են եւ չեն տիրապետում անգլերենին, ռուսերենին կամ չինարենին, ինչը վկայությունն է այն բանի, որ նրանք բավարար մակարդակի կրթություն են ստանում իրանական համալսարաններում:

Չատկանշական է նաեւ, որ իրանական կողմը Ռոհանիի եւ Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության նախագահ Ռ.Աղազադեի մակարդակով հայտարարեց, թե ուրանի հարստացումը տնտեսապես շահավետ չէ, եթե երկրի տարածքում չեն գործում ատոմային էլեկտրակայաններ, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 10000 մվտ: Միայն 2006-ին կսկսվի Բուշերի 1000 մվտ հզորությամբ ատոմային էլեկտրակայանի աշխատանքը, որը, համաձայն ռուս-իրանական պայմանավորվածությունների, առնվազն 10 տարի միջուկային վառելիք է ստանալու Ռուսաստանից:

Փաստորեն, իրանցիներն այսօր տարեկան հարյուրավոր միլիոն դոլարներ են ծախսում տնտեսապես ոչ շահութաբեր օբյեկտների եւ տեխնոլոգիաների կառուցման համար: Այս ամենն Իրանի ղեկավարության կողմից բացատրվում է նրանով, որ Իրանը նպատակ ունի մինչեւ 2010 թվականը երկրի տարածքում կառուցել 7000 մվտ հզորությամբ միջուկային կայաններ, սակայն այս նպատակը դժվար թե կարող է համարվել հասանելի առնվազն երեք պատճառներով.

1. Իրանը միայն սեփական ուժերով չի կարող կառուցել ատոմային էլեկտրակայաններ,

2. արդեն իսկ կասկածելի է թվում, որ եվրոպացիները հանձն կառնեն մինչեւ 2010 թվականը այդպիսի հզորությամբ կայաններ կառուցել,

3. Ռուսաստանը, եթե անգամ համաձայնության գա Իրանի հետ նոր ատոմային էլեկտրակայանների կառուցման շուրջ, դժվար թե կարողանա 5 տարում կառուցել նոր առնվազն 6 ատոմային էլեկտրաբլոկ՝ հաշվի առնելով, որ Բուշեր-1 կայանը ռուսները կառուցում են արդեն 10 տարի:

Ինչ վերաբերում է պլուտոնիումի ստացմանը, ապա դրա անհրաժեշտությունն իրանական կողմը բացատրում է միայն գյուղատնտեսության եւ բժշկության զարգացման գործում այդ նյութի հատուկ նշանակությամբ: Նշենք, որ գյուղատնտեսության եւ բժշկության համար անհրաժեշտ ռադիոակտիվ նյութերի ստացումը հնարավոր է նաեւ առանց «ծանր ջրով» աշխատող միջուկային ռեակտորի կառուցման, իսկ «ծանր ջրով» ռեակտորը, օրինակ, Պակիստանի միջուկային զենքի ստեղծման հիմնական բաղկացուցիչներից է եղել:

Հատկանշական է, որ չնայած իրանական մասնագետների եւ ղեկավարների հավաստիացումներին, որ իրենց պետությունը նպատակ չունի ստեղծել միջուկային զենք, կոնֆերանսի ավարտին գրեթե բոլոր արտասահմանյան մասնակիցները, այդ թվում նաեւ Իրանի հետ բարիդրացիական հարաբերություններ ունեցող Մալայզիայի միջուկային հետազոտությունների կենտրոնի ներկայացուցիչները, համոզմունք հայտնեցին, որ Իրանը նպատակ ունի ստեղծել միջուկային զենք:

Ինչի՞ արդյունք էր այս կարծիքի ձեւավորումը. կամ իրանցիների ոչ համոզիչ ելույթների, կամ էլ՝ իրանական կողմը հատուկ ցանկանում էր նշել, որ հնարավորություն եւ ցանկություն ունի ստեղծել միջուկային զենք: Մենք հակված ենք պաշտպանել երկրորդ տեսակետը, քանի որ թե՛ Յ.Ռոհանին, թե՛ կոնֆերանսն իր ելույթով փակող Ա.Ա.Հաշեմի-Ռաֆսանջանին մի քանի այնպիսի հայտարարություններ արեցին, որոնք կարող էին կարծիք ձեւավորել Իրանի միջուկային ռազմական նպատակների մասին: Օրինակ՝ Հաշեմի-Ռաֆսանջանին, կես ժամ Իրանի միջուկային ծրագրի խաղաղ բնույթի մասին պատմելուց հետո, անցավ «կրկնակի ստանդարտների» քաղաքականության մեկնաբանմանը եւ ասաց հետեւյալը.

–Ոչ ոք չի քննադատում Իսրայելի միջուկային ծրագիրը: Արեւմուտքում ասում են, թե Իսրայելը անվտանգության մեծ սպառնալիքներ ուներ եւ դրա համար ստեղծեց միջուկային զենք: Իսկ ի՞նչ անեն այս դեպքում այն պետությունները, որոնք նույնպես նման սպառնալիքներ ունեն:

Հաշեմի-Ռաֆսանջանին իր կողմից բարձրացված հարցին պատասխան չտվեց, բայց գրեթե բոլորի մոտ տպավորություն ստեղծվեց, որ նա ցանկանում է պարզապես արդարացնել Իրանի ռազմական միջուկային ծրագիրը: Եվ, ըստ տպավորության, այս ամենը նա հատուկ արեց:

Ի դեպ, իրանցիները, համոզված են, որ ԱՄՆ-ը եւ Իսրայելը երբեք չեն

հարվածի Իրանին: Միգուցե այս ամենը պայմանավորված է որոշակի ռացիոնալ պատճառներով, որոնցից մեկը կարող է լինել նաև այն, որ Իրանն արդեն ունի որոշակի միջուկային պոտենցիալ, այսպես կոչված, «կեղտոտ ռումբ»: Այս ամենը կարելի է բացատրել նաև այլ գործոններով, որոնցից հարկ է նշել Աֆղանստանում եւ Իրաքում նկատվող Իրանի եւ ԱՄՆ շահերի որոշակի համընկնումը:

Ինչեւէ, կարծես թե Իրանն այսօր ցանկանում է բոլորին համոզել, որ շատ մոտ է միջուկային զենքի ստեղծմանը, եւ այս ծրագրերի իրականացումը մեծ մասամբ կախված է Իրան–Արեւմուտք բանակցություններից, որոնք, վերլուծելով Ռոհանիի ելույթը, Իրանը վերածել է իսկական առեւտրական գործարքի: Եվ այս կոնֆերանսը, մեր կարծիքով, նպատակ ունի եւս մեկ անգամ համոզել եվրոպական երկրներին՝ որոշակի նշանակալից զիջումների գնալ Իրանի նկատմամբ:

Թե ինչքանով արդյունավետ կլինի Իրանի այս նոր մարտավարությունը՝ ցույց կտա ժամանակը:

**ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ  
ԻՐԱՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՋ  
*Արաքս Փաշայան***

2005թ. փետրվարի 14-ին Բեյրութի կենտրոնում տեղի ունեցած հզոր պայթյունի հետեւանքով ահաբեկչության զոհ դարձավ Լիբանանի նախկին վարչապետ, ազդեցիկ քաղաքական գործիչ, միլիարդատեր Ռաֆիկ Չարիրին: Նրա սպանությունը սպառնալիքի տակ դրեց Լիբանանի ներքաղաքական կայունությունն\* ու նոր իրավիճակ ստեղծեց Մերձավոր Արեւելքում:

Ռաֆիկ Չարիրիի անվան հետ է կապված Լիբանանի պատմության մի կարեւոր շրջան՝ իր բազմաթիվ ձեռքբերումներով: Նա զգալի դերակատարություն է ունեցել 1989թ. Տաիֆի համաձայնագրի ստորագրման հարցում, որով վերջակետ դրվեց Լիբանանում երկար տարիներ տեւած քաղաքացիական պատերազմին: 1990-ականների կեսերից Չարիրին, որպես երկրի վարչապետ, իր ծանրակշիռ միջազգային հեղինակության եւ անձնական լայն կապերի շնորհիվ՝ ձեռնամուխ եղավ Լիբանանի քայքայված տնտեսության վերականգնմանը՝ արտաքին աշխարհի համար այն դարձնելով հուսալի գործընկեր: Իր քաղաքական գործունեության վերջին շրջանում Ռաֆիկ Չարիրին հանդես է եկել Լիբանանի գործերին Դամասկոսի միջամտությունը նվազեցնելու եւ Լիբանանից սիրիական ռազմական ուժերը դուրս բերելու օգտին:

Հիշեցնենք, որ Սիրիան իր զորքերը Լիբանան է մտցրել քաղաքացիական պատերազմի տարիներին (1976-ին)՝ լիբանանյան իշխանությունների խնդրանքով, իսկ Տաիֆի համաձայնագրով՝ Սիրիան պարտավորվում էր Լիբանանից դուրս բերել իր զորքերը, որ այն ժամանակ հաշվվում էր 35-40 հազար: Այդ գործընթացին Սիրիան ձեռնամուխ եղավ 2000-ից: Սակայն մինչեւ վերջերս Լիբանանում գոյություն ուներ շուրջ 14-15 հազարանոց սիրիական զորամիավորում:

Որոշ տեղեկությունների համաձայն՝ դեպի Սիրիան կողմնորոշված նախագահ Էմիլ Լահուդի եւ Չարիրիի հարաբերություններում տարաձայնություններ են եղել: 2004թ. հոկտեմբերին, երբ Լահուդը երկարացրեց իր նախագահության ժամկետը, վարչապետ Չարիրին հրաժարական տվեց՝ քաղաքական դաշտում պահպանելով իր ազդեցիկ դիրքերը: Որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ անհիմն է Չարիրիին ընկալել որպես Դամասկոսին ընդդիմադիր գործիչ՝ հաշվի առնելով այն փաստը, որ երկար տարի-

ներ Սիրիան Չարիրիի հենարանն էր եւ նա ջերմ հարաբերություններ ուներ սիրիական «հին գվարդիայից» շատերի հետ:

Չարիրիի սպանությանն անմիջապես հետեւեցին Սիրիայի նկատմամբ միջազգային ճնշումները: Սպանության սիրիական հետքից առաջինը կառչեց ԱՄՆ-ը, որը Դամասկոսից իր դեսպանին հետ կանչելով՝ հասկացնել տվեց, որ չի բացառում Չարիրիի սպանության մեջ Սիրիայի մասնակցությունը: Սիրիան, որ ԱՄՆ կողմից մեղադրվում էր միջազգային ահաբեկչությանն աջակցելու մեջ, 2002թ. սեպտեմբերի 11-ից հետո դարձավ հակաահաբեկչական գործողությունների հնարավոր թիրախ: Չարիրիի սպանությունից հետո ԱՄՆ-ը վերստին ընդգծեց Սիրիայի ոչ կառուցողական դերը տարածաշրջանի կայունության հարցում:

Չարիրիի սպանության հարցում լիբանանյան հասարակության մի մասի դժգոհությունն արտահայտվեց հակասիրիական եւ հակակառավարական տրամադրություններով: Լիբանանի ընդդիմությունը փետրվարի 14-ի ահաբեկչությանը մասնակից լինելու մեջ մեղադրեց սիրիական հատուկ ծառայություններին եւ կոչ արեց միջազգային քննություն անցկացնել Չարիրիի սպանությունը բացահայտելու համար: Բեյրութում ընդդիմության հրավիրած բազմահազարանոց հանրահավաքների մասնակիցները պահանջեցին կառավարության հրաժարականն ու երկրից սիրիական զորքերի դուրսբերումը:

Արձագանքներով ստեղծված ճգնաժամային իրավիճակին՝ փետրվարի 28-ին Լիբանանի խորհրդարանի նիստում, որ նվիրված էր փետրվարի 14-ի ահաբեկչությանը, վարչապետ Օմար Քարամեն հրաժարական տվեց: Քարամենի համախոհներն իր հայրենիքում՝ Տրիպոլիում, բողոքի ակցիաներ կազմակերպեցին ի աջակցություն վարչապետ Քարամենի: Սակայն Լիբանանի խորհրդարանում տարբեր խմբավորումների միջեւ անցկացված խորհրդակցությունների արդյունքում, մարտի 10-ի քվեարկությամբ (71 կողմ, 128 դեմ) Օմար Քարամեն վերականգնվեց վարչապետի պաշտոնում:

Չարիրիի սպանության կապակցությամբ առաջ քաշվեցին տարբեր վարկածներ: Պաշտոնական Դամասկոսը հերքեց Չարիրիի սպանության մեջ Սիրիայի մասնակցությունը՝ լիբանանյան ընդդիմությանը մեղադրելով այդ հանգամանքը նախընտրական նպատակների համար շահարկելու մեջ: Սիրիան, փետրվարի 14-ի ահաբեկչությունը դիտարկելով որպես լիբանանյան ժողովրդի միասնությունը խաթարելու փորձ, մեղադրեց Իսրայելին, քանի որ այդ երկիրը ձգտում է ապակայունացնել իրավիճակը Լիբանանում:

Սիրիայի նկատմամբ ԱՄՆ կոշտ դիրքորոշմանը հակադարձ՝ Սիրիան ու Իրանը, որոնք ռազմավարական դաշինքի մեջ էին դեռեւս իրանա-

իրաքյան պատերազմի ժամանակ, կազմեցին միասնական ճակատ: Իսրայելի հասցեին սիրիական մեղադրանքները պաշտպանություն գտան Թեհրանում: Իրանի արտաքին գործերի նախարարի հավաստմամբ՝ «կազմակերպված ահաբեկչական կազմակերպություն, ինչպիսին սիոնիստական վարչակարգն է, լիովին ունակ է իրականացնել նմանօրինակ գործողություն, որն ուղղված է Լիբանանի ազգային միասնությանը»:

Հարիրիի սպանության վերաբերյալ ուշագրավ են արաբական երկրներում հասարակական կարծիքի մասին պատկերացում ստեղծող հարցախույզերը: Փետրվարի 20-ին «Alarabonline» կայքում տեղակայված այն հարցին, թե ինչ ուժ կարող է կանգնած լինել Հարիրիի սպանության թիկունքում, մասնակիցները պատասխանել են հետևյալ կերպ. Իսրայելը՝ 41,2%, Սիրիան եւ Լիբանանը՝ 37,9%, արեւմտյան ծառայությունները՝ 19,4%, «Ալ-Կաիդան»՝ 1,5%:

Արաբ վերլուծաբաններից շատերի կարծիքով՝ Հարիրիի սպանությունը, որից տուժեցին հիմնականում Սիրիան եւ Լիբանանը, խիստ ձեռնտու էր Իսրայելին: Սիրիա-Լիբանան դաշինքի անկումով՝ Բեյրութը, ձերբազատվելով Դամասկոսի ազդեցությունից, կարող է դառնալ ավելի զիջող Իսրայելի հետ հարաբերություններում: Բացի այդ, միայն իսրայելական հատուկ ծառայությունները կարող էին Լիբանանում նման մասշտաբի գործողություն իրականացնել: Սաուդական «Ալ-Վատան» թերթը նշում է, որ Սիրիային ձեռնտու չէր քանդել այն համակարգը, որ նա կառուցել էր Լիբանանում՝ դառնալով այդ երկրի անվտանգության երաշխավորը: Ավելի արմատական ուժերի կարծիքով՝ փետրվարի 14-ը Մերձավոր Արեւելքը վերածելու մեծ ծրագրի մի մասն է: Արաբական մամուլում տեղ գտած առանձին վերլուծությունների համաձայն՝ Հարիրիի սպանությունը դավադրություն է ընդհանրապես արաբների դեմ եւ նախապատրաստվել է արաբական աշխարհի սահմաններից դուրս:

Իսրայելի պաշտպանության նախարար Շաուլ Մոֆազը Հարիրիի սպանության մեջ ավելի հավանական է համարում Դամասկոսից ղեկավարվող սիրիամետ մի կազմակերպության մասնակցությունը: Մոֆազի կարծիքով՝ ահաբեկչությունը հովանավորող Սիրիային ձեռնտու էր Հարիրիին վերացնելը, քանի որ նա հանդես էր գալիս Լիբանանից սիրիական զորքերի դուրսբերման օգտին: Իսրայելի քննսետի անդամ Ազմի Բիշարայի կարծիքով՝ Հարիրիի սպանության մեջ կարող են մասնակից լինել ամերիկյան եւ իսրայելական հատուկ ծառայությունները՝ որպես պատվիրատու, իսկ իրականացնել կարող էր լիբանանյան որեւէ իսլամական արմատական կազմակերպություն:

Որոշ տեղեկությունների համաձայն՝ Հարիրիին չեզոքացնելու մեջ հնարավոր է՝ հետաքրքրված լինեին նաեւ միջազգային իսլամական



արձանատական կազմակերպությունները, քանի որ իսլամի սուննի ուղղությունը դավանող Չարիրին դեմ էր Լիբանանում իսլամական տիպի պետության ստեղծմանը: Նշենք, որ Ռաֆիկ Չարիրին, որ չափազանց մտերիմ կապեր ուներ սաուդական ընտանիքի հետ, դեռևս 1990-ականների վերջին «Ալ-Կաիդայի» եւ մի քանի այլ նման խմբավորումների կողմից մեղադրվել էր *թաքֆիրի* (շեղում ճշմարիտ հավատքից) մեջ: Չարիրիի սպանության կապակցությամբ ուշագրավ է «Ալ-Կաիդայի» առաջնորդի հայտարարությունը, որում ահաբեկչության համար պատասխանատու են համարվում իսրայելական, սիրիական եւ Լիբանանյան հատուկ ծառայությունները:

Դեպքերի զարգացման այս համատեքստում հույժ կարելու է «Յիզբալլահի» նշանակությունը<sup>\*\*</sup>, որի գլխավոր քարտուղար Չասան Նասրալլահը, նշեց, որ Չարիրին վերջին շրջանում զգալի ջանքեր է գործադրել, որպեսզի «Յիզբալլահը» չզինաթափվի եւ չներգրավվի ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում: Չակասիրիական տրամադրությունների խորապատկերում տպավորիչ էր մարտի 7-ին Բեյրութում «Յիզբալլահի» կազմակերպած հակամերիկյան հանրահավաքը, որի հարյուր հազարավոր մասնակիցները հանդես եկան ի պաշտպանություն Սիրիայի: Ցուցարարների հիմնական սոցիալական տարրը Լիբանանի ամենախոշոր՝ շիա համայնքն էր: Լիբանանի մահմեդականների մի զգալի մասի, հատկապես շիաների շրջանում տիրապետող է այն կարծիքը, թե Լիբանանը իսրայելական ագրեսիային կարող է դիմագրավել Սիրիայի հետ միասին: Այդ իսկ պատճառով համազգային հակասիրիական ելույթների հավանականությունը Լիբանանում մեծ չէ: Եիշտ է, Լիբանանյան ընդդիմադիր ուժերի գործունեությունը Դամասկոսի եւ Բեյրութի հարաբերություններում կարող է որոշ բարդություններ առաջացնել, սակայն, ամենայն հավանականությամբ, կողմերի միջեւ խնդիրները ժամանակավոր կլինեն, քանի որ երկարաժամկետ հեռանկարում այս երկու պետությունները կապված են ընդհանուր ռազմավարական եւ տնտեսական համագործակցությամբ:

Միջազգային ճնշումների ներքո մարտի 2-ին Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը հայտարարեց, որ Սիրիան ձեռնամուխ է լինելու սիրիական ռազմական գործմասերը Լիբանանից դուրս բերելու գործընթացին: Մարտի 7-ից սիրիական առաջին զորամիավորումները սկսեցին վերադասավորվել Լիբանանի արեւելյան շրջանում՝ Բեքաայի հովտում, Սիրիայի սահմանի մոտակայքում: Բաշար ալ-Ասադն առաջարկել է այդ գործընթացի իրականացման երկփուլ տարբերակ: Սկզբում զորքերը կքաշվեն Բեքաայի հովիտ, իսկ հետո ընդհանրապես դուրս կբերվեն երկրից: Սակայն գործընթացի իրականացման ստույգ ժամկետներ Սիրիայի նախագահը

գահը մինչև օրս չի նշում: Օրերս Լիբանանի արտգործնախարար Մահմուդ Չամնուդը հայտարարել է, որ միայն ապրիլի 7-ին, այսինքն՝ Սիրիայի եւ Լիբանանի պաշտպանության նախարարների հանդիպման օրը, կորոշվի սիրիական զորքերի դուրսբերման հստակ ժամանակացույցը:

ԱՄՆ-ը պահանջում է, որպեսզի սիրիական զորքերը վերջնական դուրս բերվեն Լիբանանից ոչ ուշ, քան մայիսին՝ նախքան խորհրդարանական ընտրությունները, այլապես Դամասկոսը կենթարկվի պատժամիջոցների: Մարտի 13-ին ՄԱԿ հատուկ ներկայացուցիչ Թ.Ռոդ-Լարենսը Սիրիային չորս կետից կազմված վերջնագիր ներկայացրեց, որը չկատարելու դեպքում Սիրիան կենթարկվի քաղաքական եւ տնտեսական պատժամիջոցների: Ըստ այդմ՝ Սիրիան պետք է նշի զորքերը Լիբանանից դուրս բերելու ստույգ ժամկետներ, երկրից հեռացնի սիրիական հատուկ ծառայությունների հինգ հազար աշխատակիցներին, չմիջամտի Լիբանանում մայիսին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին: ՄԱԿ-ը անհրաժեշտ է համարում նաեւ ապառազականացնել Լիբանանում գործող զինված խմբավորումները: Այս դիրքորոշումն աջակցություն է գտել նաեւ Եվրամիության եւ Արաբական պետությունների լիգայի կողմից:

Չարիրիի սպանությունից հետո Լիբանանում ներքաղաքական անկայունությունը հաղթահարելու եւ փխրուն հավասարակշռությունը պահպանելու համար խիստ հրատապ է սոււննի քաղաքական փոխանորդի հարցը: Լիբանանյան քաղաքական ավանդույթի համաձայն՝ որդիները փոխարինում են հորը կամ պապին: Այս պարագան Չարիրիի դեպքում, հավանական է, չի գործի, քանի որ նրա որդիներից ոչ մեկը քաղաքական ակտիվություն չի ցուցաբերել: Իսկ խարիզմատիկ սոււննի գործիչ, ինչպիսին Չարիրին էր, Լիբանանի քաղաքական դաշտում այսօր չկա:

Անշուշտ, Ռաֆիկ Չարիրիի սպանությունը անհետեւանք չի մնա նաեւ Մերձավոր եւ Միջին Արեւելքում ընթացող գործընթացների վրա: Անկախ այն հանգամանքից՝ Սիրիան մասնակից է Չարիրիի սպանությանը, թե ոչ, ԱՄՆ-ը կուժեղացնի ճնշումները Դամասկոսի վրա: Սիրիային քիչ խուսանավելու տեղ է մնում ՄԱԿ ԱԽ 2004-ի վերջին ընդունված 1559 բանաձեւի չկատարման համար, որը Սիրիայից պահանջում է դուրս բերել զորքերը Լիբանանից: ԱՄՆ տեսանկյունից՝ Իրաքի, Իրանի եւ պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման հարցում Սիրիայի դերը հանգուցային է: Սիրիայի հետ ռազմավարական համագործակցության սահմանափակմամբ՝ Իրանը կկորցնի տարածաշրջանում իր լուրջ դաշնակցին եւ կզրկվի Լիբանանում գործելու հնարավորությունների զգալի մասից: Իրաքի դիմադրությանը ցուցաբերվող ռազմական, նյութական եւ քարոզչական օգնությունը Սիրիայի կողմից կբացառվի: Բացի այդ, Սիրիան հնարավորինս զերծ կմնա պաղեստինյան մի շարք արմատական

շարժումները հովանավորելուց, եւ, թերեւս, կիրաժարվի մերձավոր-արեւելյան հակամարտության խաղաղ կարգավորման իր արմատական դիրքորոշումից:

Միաժամանակ, փետրվարի 14-ի ահաբեկչությունը լուրջ կռվան է Միացյալ Նահանգների համար՝ շարունակելու աշխարհում նոր կարգուկանոն հաստատելու իր քաղաքականությունը:

\* Լիբանանը արաբական պետությունների շարքում առանձնանում է ուրույն պետական կառուցվածքով, որի հիմքում ընկած է կրոնադավանական սկզբունքը: Համաձայն 1943թ. կնքված Ազգային դաշինքի՝ Լիբանանի նախագահը պետք է լինի քրիստոնյա մարոնի, վարչապետը՝ սուննի, խորհրդարանի նախագահը՝ շիա, արտգործնախարարը՝ հույն-ուղղափառ, պաշտպանության նախարարը՝ դրուզ եւ այլն: Կրոնական սկզբունքը պահպանվում է վարչական համակարգում պաշտոնների նշանակման եւ խորհրդարանում պատգամավորական տեղերի բաժանման ժամանակ նույնպես:

\*\* «Հիզբալլահը» բացառիկ կարեւոր դեր է խաղացել Լիբանանի հարավում իսրայելական զորքերի դեմ դիմակայություն կազմակերպելու առումով: «Հիզբալլահի» ռազմական գործողությունների շնորհիվ միայն 1985թ. հունիսին Իսրայելն իր զորքերը դուրս բերեց հարավային Լիբանանի տարածքի մեծ մասից, բացառությամբ՝ «անվտանգության գոտուց», իսկ 2000թ. մայիսին՝ ամբողջ Լիբանանից: Տաիֆի համաձայնագրով, երբ զինված հակամարտության բոլոր կողմերը համաձայնեցին զինաթափվել, Սիրիայի ջանքերի շնորհիվ «Հիզբալլահը» պահպանեց ռազմական կառույցի նշանակությունը՝ ներգրավվելով Լիբանանի քաղաքական կյանքում, իսկ 1992թ. խորհրդարանական ընտրություններում ստացավ ութ տեղ: Սիրիան «Հիզբալլահին» զգալի աջակցություն ցույց տալով՝ ձգտել է օգտագործել նրան որպես Իսրայելի վրա ճնշում գործադրելու կարեւոր լծակ: «Հիզբալլահը» հանդես է եկել Լիբանանում իրանական տիպի իսլամական պետություն ստեղծելու օգտին, որին հովանավորող Իրանը ձգտում է տարածաշրջանում իր ազդեցության տարածմանը: Անհերքելի է այն փաստը, որ Դամասկոսը հանգուցային դեր է խաղացել Իրան-«Հիզբալլահ» կապերի ապահովման հարցում: Սիրիան Իսրայելի դեմ պայքարի շրջանակներում Լիբանանի տարածքը շատ հաճախ օգտագործել է տարբեր տիպի ռազմականացված խմբավորումների համար խարխսիներ ստեղծելու նպատակով: «Հիզբալլահի» հետ Սիրիայի ռազմավարական համագործակցության շնորհիվ, հանձին շիա համայնքի, Սիրիան լուրջ հեղափոխում է Լիբանանում:

**ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ  
ԱՇԽԱՐՀԱԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ  
Փագիկ Տեր-Չարությունյան**

Այսօր աշխարհում տիրում է մի վիճակ, երբ բոլորը սպասում են ԱՄՆ այս կամ այն քայլին, որպեսզի արդեն հետո փորձեն հարմարվել կամ հակադրել այդ գերտերության նախաձեռնություններին: Ավելին. ստեղծվել է միջ, թե այն ամենը, ինչ կատարվում է աշխարհում, անգամ օվկիանոսային ցունամիճ, հրահրում են ամերիկացիները: Նկատենք, որ նման առասպելների տարածման գործում կարծես թե մեծ դերակատարում ունեն իրենք՝ ամերիկացիները, քանի որ նման հարցադրումն ավելի է բարձրացնում Միացյալ Նահանգների՝ որպես միակ գերտերության, վարկանիշը: Այլ խնդիր է, որ ունենալով տարաբնույթ, առաջին հերթին մտավոր ռեսուրսների մեծ առավելություն, ԱՄՆ-ը կարողանում է իր օգտին ծառայեցնել ցանկացած փոփոխություն եւ իրադարձություն:

***Բժեզինսկին եւ Քիսինջերը՝ այլախոհներ***

Վերոհիշյալի համատեքստում խիստ կարեւոր է փորձել ըմբռնել ԱՄՆ ժամանակակից աշխարհաքաղաքականության էությունը, որի որոշ դրույթներն սկսել են զգալիորեն տարբերվել նախկինում ընդունված դասական կանոններից: Պատահական չէ, որ ականավոր աշխարհաքաղաքագետ Ջեֆրանե Բժեզինսկին այսօր փաստորեն հանդես է գալիս որպես Ջ.Բուշի ռազմավարության քննադատ: Վաշինգտոնի ներկայիս կուրսի հետ հաճախ իր անհամաձայնությունն է հայտնում (ավելի նրբանկատ ձևով) նաեւ Յենրի Քիսինջերը: «Այլախոհ» քաղաքագետների ցուցակը կարելի է շարունակել:

Ըստ մեզ, նման տարածայնությունների հիմնական պատճառն այն է, որ «հին» աշխարհաքաղաքական դպրոցի ներկայացուցիչները ներկայիս ամերիկյան ռազմավարությունը փորձում են մեկնաբանել ավանդական աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական մոտեցումներով, մինչդեռ ԱՄՆ արդի քաղաքականությունում առաջին պլան են դուրս եկել գաղափարախոսական նկատառումները: Դա ամենեւին չի նշանակում, թե տիրող աշխարհագրական դիրքեր գրավելը կամ գլոբալ տնտեսական խնդիրներ լուծելը կորցրել են իրենց հրատապությունը: Դա ընդամենը նշանակում է, որ վերոհիշյալ գործոններին զուգահեռ, ներկայումս

առավելապես կարելուովում են գաղափարախոսական խնդիրները: Այսինքն՝ կարելի է ամրագրել, որ այսօր *աշխարհագաղափարախոսական գործունը ԱՄՆ-ի համար ունի ավելի առաջնային նշանակություն, քան աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական գործոնները*: Այլ խոսքով, *աշխարհագաղափարախոսությունը* (այս եզրը ժամանակին օգտագործել է գերմանացի քաղաքագետ Կարլ Յաուսհոֆերը) աշխարհաքաղաքականության եւ աշխարհատնտեսության գաղափարականացման արգասիք է եւ գործիք՝ ռազմաքաղաքական խնդիրներ լուծելու համար:

Նման իրադրությունը պայմանավորված է հիմնականում նրանով, որ ԱՄՆ-ը վերջնականորեն ձեւավորվել է որպես գերկայսրություն եւ այդ երկրի քաղաքական ընտրանին ըմբռնում է, որ առանց գլոբալ եւ միատարր գաղափարական դաշտի ստեղծման անհնարին է ապահովել ԱՄՆ մենատիրությունն աշխարհում: Այդպիսի մոտեցումը կարիք ունի քաղաքականություն վարելու նոր մեթոդների մշակման: Օրինակ, ԱՄՆ Ազգային անվտանգության այսօրվա հիմնական դրույթներից է Ռեյ-Դ կորպորացիայի եւ Պենտագոնի կողմից մշակված այն թեզը, թե երկրների *«կտրված լինելը»* վտանգ է ներկայացնում ԱՄՆ-ի համար: Այս թեզը մեկնաբանվում է հետեւյալ ձեւով. այն բոլոր երկրները, որոնք *կտրված չեն, այլ ներգրավված են գլոբալացման գործընթացներում*, կարող են դեկավարվել ԱՄՆ կողմից *ոչ ռազմական* եղանակներով: Նշենք, որ *գլոբալացում* եզրն այս համատեքստում պետք է ընկալել որպես ամերիկյան կայսրության կողմից ընդունված նորմերի եւ արժեքների տարածում՝ *ամերիկանացում*: Այստեղ հարկ է նշել, որ երբեմն այլ երկրներ ներմուծվող այդ նորմերը եւ կանոնները չեն կիրառվում բուն ԱՄՆ-ում, այսինքն՝ դրանք «արտադրված» են զուտ արտահանման համար: *(Նկատենք, որ թեեւ «գլոբալիզացիան» համեմատաբար նոր եզր է՝ առաջին անգամ այն կիրառել է հասարակագետ Ջ.Մակլինը 1981թ., սակայն այդ գործընթացը մշտապես ընթացել է մարդկության պատմության ընթացքում՝ արտահայտելով այս կամ այն կայսրության նորմերի տարածումն աշխարհում: Օրինակ, դեռ ոչ վաղ անցյալում առկա էին գլոբալիզացիայի երկու ուղղություն. իրենց հակադիր գաղափարախոսական արժեքները եւ նորմերն աշխարհով մեկ տարածում էին եւ ԱՄՆ-ը, եւ ԽՍՀՄ-ը):*

Յամաձայն ԱՄՆ ստրատեգների, գլոբալացվող տարածաշրջանները կազմում են աշխարհի *«գործող միջուկը»*, որն իր մեջ ներգրավում է Եվրոպան, Յարավային Ամերիկայի մեծ մասը եւ անգամ Ռուսաստանն ու Չինաստանը:

Ըստ մեզ, Ռուսաստանը եւ հատկապես Չինաստանն այս ցուցակում գտնվում են պայմանականորեն. համարվում է, որ նրանք գտնվում են

անցումային փուլում, եւ շատ բան կախված է զարգացման այն ուղուց, որը կընտրեն այդ երկրները: Նկատենք, որ հենց այս հանգամանքով են պայմանավորված վերջերս անընդհատ դարձած նախազգուշացումները Ռուսաստանին՝ կապված Վ.Պուտինի վարած փոքր-ինչ ինքնուրույն քաղաքականության հետ: Հատկանշական է, որ ամերիկյան աշխարհաքաղաքականության՝ Ռուսաստանին վերաբերող դրույթը վերջերս ուղղակիորեն հայտարարեց Եվրոպա ժամանած Ջ.Բուշը, ըստ որի *«Ռուսաստանի ապագան՝ նրա եվրոպական ընտանիքի եւ տրանսատլանտյան հանրության հետ միասին լինելն է»:*

Այլ պարագայում, Ռուսաստանը կարող է հայտնվել (եթե արդեն չի հայտնվել) այն երկրների ցուցակում, որոնք ներգրավված չեն ԱՄՆ կողմից գլոբալացվող տարածքում: Նույն տրամաբանությունն է գործում նաեւ ԱՊՀ այլ երկրների նկատմամբ: Դրանցից ոմանք (օրինակ, Վրաստանն ու Ուկրաինան) արդեն «գլոբալացվել» են, ոմանց հետ դեռ անհրաժեշտ է աշխատանք վարել, եւ նրանք սպասում են իրենց հերթին: Այս առումով «հեղափոխություն» կոչվող հեղաշրջումները կրում են զուտ աշխարհագրափարախոսական բովանդակություն եւ կարող են որակվել եթե ոչ ռազմական, ապա նվազագույնը ուժային գործողություններ:

Այն երկրները, որոնք, համաձայն ամերիկյան եզրաբանության, դուրս են գլոբալիզացիոն գործընթացներից, կոչվում են *«չինտեգրված ճեղքվածքներ»*, որոնք կտրված են գլոբալացվող աշխարհից եւ չեն ենթարկվում ԱՄՆ տրամաբանությանը: Դրանք հանդիսանում են վտանգի աղբյուր ԱՄՆ-ի համար՝ իրենց իսկ գոյությամբ: Այդ իսկ պատճառով, այսօր ռազմական-ուժային եղանակներով հնազանդեցման եւ ղեկավարման ենթակա են ողջ Աֆրիկան, Բալկանները, Կովկասը, Հարավարեւմտյան եւ Հարավարեւելյան Ասիայի մի շարք երկրներ: Անշուշտ, դրանց մեջ են ներգրավված Իրանը, Չյուս. Կորեան, Կուբան եւ այլն:

Համաձայն Պենտագոնի փորձագետների, ԱՄՆ հիմնական գլոբալ խնդիրը՝ նման *«չինտեգրված ճեղքվածքների»* կրճատումն է կամ վերացումը: Այդ համատեքստում, հաշվի առնելով անգլո-սաքսերի հետեւողականությունը, կարելի է պնդել, որ մասնավորապես Իրանի դեմ պատերազմը փաստորեն արդեն հայտարարված է եւ հարցը միայն կիրառվող մեթոդների ընտրության ու իրադրության հասունացման մեջ է:

Ի հաստատումն վերոհիշյալ դրույթների նշենք, որ վերջերս սենատորներ Ջո Լիբերմանը եւ Ջոն Մաքեյնը ԱՄՆ Կոնգրեսին ներկայացրին *«Ժողովրդավարության առաջխաղացման»* մասին օրենքի նախագիծ: Համաձայն այդ օրենքի, եթե ինչ-որ երկիր խախտում է ժողովրդավարության նորմերը (համաձայն ՌԵՆԴ փորձագետների եզրաբանության՝ *կտրվում է*), ապա դա սպառնում է ԱՄՆ ազգային անվտանգությանը, եւ

ԱՄՆ-ը պարտավոր է այդ երկրներում վերականգնել ժողովրդավարությունը: Հատկանշական է, որ համաձայն այդ օրենքի, ԱՄՆ-ը պարտավոր է Պետդեպարտամենտին կից ստեղծել «ժողովրդավարական շարժման եւ անցումային փուլի» վարչություն, որն, իր հերթին, ունենալու է համապատասխան բաժանմունքներ ամերիկյան դեսպանատներում: Այդ ծրագրի կազմակերպչական մասի վրա ենթադրվում է երկու տարում ծախսել մոտ \$250 մլն:

Ինչպես հայտարարեց սենատոր Մաքեյնը, «ժողովրդավարության ու ազատության աջակցությունը չի կարելի անջատել ԱՄՆ ազգային անվտանգության խնդիրներից, եւ եթե Նյու Յորքի, Վաշինգտոնի կամ Կալիֆորնիայի անվտանգությունը գոնե մասնակիորեն կախված է էր Ռիյադի, Բաղդադի կամ Կահիրեի ազատությունից, մենք պարտավոր ենք աջակցել այնտեղ ժողովրդավարության հաստատմանը եւ հասարակության կատարելագործմանը: Դա պակաս կարելուր չէ, քան նոր ռազմական տեխնիկայի մշակումները»:

**Գիտական ներուժը՝  
աշխարհագաղափարախոսության սպասարկող**

Պատահական չէ, որ սենատոր Մաքեյնը գաղափարների տարածումը համենատուն է ռազմական տեխնիկայի մշակումների հետ: Հայտնի է, որ ԱՄՆ խոշոր աշխարհաքաղաքական ծրագրերի հիմքում ընկած են առաջատար տեխնոլոգիաները, որոնք արագ արձագանքում եւ բավարարում են կայսրությունում շարունակաբար ձեւավորվող նոր պահանջները: Օրինակ, հաշվի առնելով, որ այսօր ԱՄՆ զինուժի ամենամեծ խնդիրը մարդկային ռեսուրսների պակասն է, սկսել է արդեն գործել մոտ \$140 մլրդ արժողությամբ մի ծրագիր՝ ռոբոտ զինվորներ մշակելու եւ արտադրելու ուղղությամբ: Հաշվի առնելով այն հսկայական միջոցները, որ ԱՄՆ-ը ներդնում է բիոտեխնոլոգիաների ոլորտում, կարելի է չկասկածել, որ նման ծրագիրն առնվազն մասնակի հաջողություն կունենա: Այնպես որ՝ կարելի է պատկերացնել մի սցենար, երբ անխոցելի ռոբոտ զինվորները հաստատում են ժողովրդավարությունը մի որեւիցե «կտրված» երկրում:

Միեւնույն ժամանակ ԱՄՆ-ում առաջատար տեխնոլոգիաների շարքին են դասում ոչ միայն տեխնիկական, այլեւ հումանիտար՝ առաջին հերթին մարդկային, համայնքային եւ ազգային հոգեբանությունն ուսումնասիրող ուղղությունները: Կարելի է պնդել, որ ամերիկյան գիտնականները կարողացել են համակարգել, գիտականացնել եւ տեխնոլոգիաների վերածել այն ամենը, ինչը նախկինում վերագրում էին մարդկային խորամանկությանը կամ անհատի կողմից կիրառվող խարդավանքներին: Անշուշտ,

զանազան հնարքներ կիրառվում էին քաղաքականությունում կամ հատուկ ծառայություններում եւ անցյալում, սակայն դրանք իրագործվում էին առանձին անհատների կողմից ու չունեին հայեցակարգի կարգավիճակ: Բնորոշ է նաեւ, որ զարգացնելով սեփական գիտությունը՝ ԱՄՆ-ը որոշակի ջանքեր է գործադրում, որպեսզի խափանի գիտատեխնիկական առաջընթացն այլ երկրներում:

Դրա մասին է վկայում վերջերս տեղեկատվական դաշտում հայտնված ամերիկյան ՌԵՆԴ կենտրոնի մի մշակումն այն մասին, թե ինչպես պետք է պայքարել այլ երկրների գիտատեխնիկական զարգացման դեմ: Այդ փաստաթղթում (որի գաղտնանունն է «Արծաթե բանալի»), մասնավորապես, նկարագրվում է հետեւյալ հնարքը: Մասնագետներին հայտնի է, որ տվյալ գիտնականի մոտեցումներն այսինչ կարելու հարցի վերաբերյալ գիտականորեն ճշգրիտ չեն: Սակայն այդ գիտնականի համբավը ուճացնում են, նրա մոտեցումներն արհեստականորեն գովազդում (շնորհելով այդ գիտնականին միջազգային բարձր, անգամ Նոբելյան մրցանակներ)՝ ներկայացնելով դրանք աշխարհին որպես գիտության վերջին նվաճում: Իրականում այդպիսով շեղում են այլ երկրների գիտական հանրությանը ճիշտ հետազոտական ուղղությունից եւ նպաստում են, որպեսզի այդ երկրներում գիտությանն ուղղված միջոցները ծախսվեն ոչ նպատակային:

Նշենք, որ նման մի միտում նկատվում է նաեւ այն դրամաշնորհային թեմաներում, որոնք տրվում են, մասնավորապես, ԱՊՀ տարածքում գործող գիտաշխատողներին: Տպավորությունն այնպիսին է, որ առաջարկվող թեմաները որոշ դեպքերում հեռու են զարգացման հիմնական ուղուց:

«Ժողովրդավարական շարժման եւ անցումային փուլի» ներկայիս ժամանակներն ավելի քան բարդ են ու հակասական: Որոշ վերլուծաբաններ թեեւ համաձայն են, որ արդի պատմական ժամանակահատվածը իրոք անցումային է, բայց մեկ այլ առումով՝ աշխարհը միաբեւեռությունից անցնում է բազմաբեւեռ համակարգի: Բոլոր պարագաներում, սակայն, աշխարհաքաղաքականության դասական Կարլ Յաուսհոֆերի ձեւակերպած *աշխարհագաղափարախոսություն* եզրը վերստին հրատապ հասկացության է վերածվում:



**ԱՄՆ ՌԱԶՄԱՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ  
ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
*Սերգեյ Գրինյան*

Վերջին ամիսներին մի շարք վերլուծական կենտրոններ փորձում էին կանխագուշակել, թե ինչպիսին կլինի Միացյալ Նահանգների ռազմավարությունը նախագահ Ջորջ Բուշի երկրորդ պաշտոնավարման ժամանակ: Իրաքից հետո ո՞վ կլինի հաջորդը: Իրաքը կնշանավորի՞, արդյոք, Ամերիկյան Մեծ Կայսրության սկիզբը կամ վախճանը: Եվ կա՞, արդյոք, «չարիքի առանցքից» այն կողմ խաղաղություն:

Այս եւ այլ հարցերի գնահատականների թվում են ամենատարբեր «ուղեղային տրեստների» փորձագետների կարծիքները: Հատուկ ուշադրություն են գրավում ԱՄՆ ներկայիս վարչակազմի առաջատար վերլուծական կենտրոններից մեկի՝ Չեռներեցության ամերիկյան ինստիտուտի (AEI) վերլուծաբանների դատողությունները. կենտրոն, որի խնդիրն է՝ առաջ տանել խոշոր բիզնեսի եւ վերագգային կորպորացիաների շահերը:

Այս կենտրոնի փորձագետների կարծիքների հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված է ոչ այնքան նրանց ճանաչված ու ծանրակշիռ լինելով, որքան նրանով, որ ԱՄՆ ներկայիս վարչակազմի անդամների զգալի մասն այս կամ այլ կերպ կապված է AEI հետ: Այսօր AEI երկու տասնյակից ավելի նախկին աշխատակիցներ հանդիսանում են Միացյալ Նահանգների փոխնախագահ Դիք Չեյնիի թիմի անդամներ եւ մեծամասնություն են կազմում Պենտագոնի քաղաքացիական ղեկավարությունում (դրանց թվում է նաեւ Փոլ Վուլֆովիցը): Հենց նրանք ձեւավորեցին «Իրաքի ազատագրման համար պատերազմի» վաշինգտոնյան պատկերացումը: Ուստի ամենից շատ այդ ինստիտուտի մշակումները կարող են իրականություն դառնալ:

AEI փորձագետների կարծիքով, մոտակա տարիներին ԱՄՆ հիմնական ռազմաստրատեգիական ուղղությունները պետք է լինեն. 1. մերձավորարեւելյան տարածաշրջանի քաղաքական տարածության վերակառուցման միջոցառումների ռազմական ապահովումը, 2. գլոբալ առաջնության հասնելու՝ Չինաստանի աճող հավակնությունների զսպումը ռազմական ճանապարհով:

Կարելու է նշել, որ համաձայն ԱՄՆ այլ վերլուծական կենտրոնների փորձագետների գնահատումների, մերձավորարեւելյան տարածաշրջանի վերափոխման միջոցառումների ռազմական ապահովումը կարելի է

որակել որպես երկրորդ փուլի՝ Չինաստանի զսպան խնդրի լուծման նախապատրաստություն:

\* \* \*

Ինստիտուտի աշխատանքներում նշվում է, որ վերջին տարիներին Ամերիկայի կողմից հաստատված աշխարհակարգի (Pax Americana) ստատուս քվոյի պահպանումը պահանջում է, որպեսզի Միացյալ Նահանգներն ապահովի մերձավորարեւելյան տարածաշրջանի քաղաքական վերափոխումը Մեծ Մերձավոր Արեւելքի՝ միաժամանակ «սանձահարելով» չինական զինուժի աճող հզորությունը: Փորձագետների կարծիքով, այս խնդիրներից յուրաքանչյուրի լուծումը բավականին բարդ է, սակայն նրանք երկուսն էլ սերտորեն միահյուսված են ներգրավված «խաղացողների» շահերով ու նպատակներով, ուստի դրանցից նույնիսկ մեկի լուծման անհաջողությունն ընթացիկ աշխարհաքաղաքական հակամարտությունում կհանգեցնի զլորալ պարտության:

Առաջադրված ռազմավարական նպատակներին հասնելու համար ամերիկյան նոր վարչակազմից պահանջվում է գործուն ռազմական ստրատեգիայի ձեւավորում, որը կապահովի պատերազմների վարումն առնվազն երկու սկզբունքորեն տարբեր թատերաբեմներում: Թեեւ միաժամանակ երկու ճակատում զորքի օգտագործման ծրագրումը նախկինում ԱՄՆ ռազմական գիտության համար գերակայող է եղել, աշխարհում վերջին տարիների ռազմաքաղաքական իրավիճակի զարգացումները հանգեցրին նրան, որ ամերիկյան ռազմական վերլուծաբանների համար խիստ խնդրահարույց դարձավ առկա ուժերով այն իրագործելու իրական հնարավորությունների մասին խոսելը: Միջազգային ասպարեզում այսօր ձեւավորված ուժերի հաշվեկշիռը Միացյալ Նահանգներին թույլ չի տալիս նման ռազմավարությունը հստակ կերպով իրացնել: Ամերիկյան բանակը ստիպված է հավասարակշռություն պահպանել պատերազմի երկու թատերաբեմների միջեւ՝ սոսկ վերջին պահին դրանցից մեկում ուժի զանգվածային օգտագործման մասին որոշում ընդունելով:

Այս համատեքստում, ԱՄՆ Կոնգրեսին ներկայացված Պենտագոնի վերջին զեկույցները հաստատում են այն ենթադրությունը, թե ամերիկյան ուժերի ներկայիս տեսքը, իրաքյան խնդրում նրանց ներգրավվածությունը թույլ չեն տալիս մոտակա ժամանակներում խոսել երկու ճակատում կռվելու ռազմավարության լիարժեք իրագործման հնարավորության մասին:

Մեծ Մերձավոր Արեւելքը, ընդգրկելով Արեւմտյան Աֆրիկայից մինչեւ Զարավարեւմտյան Ասիա ընկած տարածությունը, հանդիսանում է չափազանց բարդ ու ոչ միանշանակ ընդունվող տարածաշրջան ոչ միայն ռազմական, այլեւ քաղաքական, տնտեսական եւ այլ տեսանկյուններից, ինչը

դժվարացնում է նրա վերափոխման միջոցառումների միասնական ծրագրի շրջանակներում առաջադրված խնդիրների լուծումը: Դրա հետ մեկտեղ, տարածաշրջանի խնդիրների մեծ մասը ռազմական ուժի կիրառման հարցում պահանջում է միասնական ռազմավարություն ու հետեւողական մոտեցում: Այդ իմաստով AEI փորձագետները նշում են, որ տարածաշրջանի եւ, ընդհանրապես, իսլամական աշխարհի համար արդյունավետ ռազմական ստրատեգիայի հիմքերի իմաստավորումն ու մշակումը եթե ոչ տասնամյակներ, ապա տարիներ կտեւեն, իսկ անցկացվող միջոցառումները ոչ միշտ հաջող կլինեն: Սակայն այսօր ԱՄՆ-ի համար բազային նախագիծը կենսականորեն անհրաժեշտ է:

AEI մասնագետների կարծիքով, Մերձավոր Արեւելքում ամերիկյան ռազմական ստրատեգիայի բազային ուղղությունը պետք է հիմնվի սեպտեմբերի 11-ից հետո աֆղանական եւ իրաքյան կամպանիաներում ձեռք բերված ռազմավարական նախաձեռնության պահպանման վրա: Հասկանալով, որ իսլամական աշխարհի բարեփոխումը երկար կտեւի, ԱՄՆ-ը կջանա իր հակառակորդներին պահել «ռազմավարական պաշտպանության» վիճակում՝ ահաբեկչական խմբերի ղեկավարների դեմ հատուկ գործողություններ անցկացնելով, ահաբեկիչներին ֆինանսավորումից զրկելով, իսկ եթե հարկ է՝ նաեւ ռազմական ուժ գործադրելով:

Ձեւավորված ռազմաքաղաքական իրադրության վերլուծությունն ու գնահատումը AEI փորձագետներին հնարավորություն տվեցին որոշելու աշխարհում իսլամական ահաբեկչական խմբավորումների առավել ակտիվ գոտիները: Արեւմտյան Պակիստանը եւ Աֆղանստանի ու Պակիստանի սահմանամերձ շրջանը, Հարավային եւ Արեւմտյան Աֆղանստանը, Արաբական թերակղզին՝ հատկապես Սաուդյան Արաբիան ու Եմենը, Հարավարեւելյան Ասիան՝ Թաիլանդից մինչեւ Ինդոնեզիա ու Հարավային Ֆիլիպիններ, Արեւմտյան Աֆրիկան՝ Արաբիալ Նիգերիան եւ Մալին, Հյուսիսային Աֆրիկան՝ Հարավային Սահարայով հանդերձ եւ այլն:

Կարելի է նաեւ այն, որ վերջին տարիներին ահաբեկչական խմբերի առավել ակտիվության ավանդական սահմանների ուրվագծումների հետ մեկտեղ, AEI փորձագետներն այդտեղ ներառել են նաեւ *բազմաքանակ մահմեդական բնակչությամբ եվրոպական քաղաքները*:

Մասնագետների կարծիքով, Մեծ Մերձավոր Արեւելքի համար ամերիկյան հեռանկարային ռազմավարությունը պետք է ձգտի հավասարակշռություն պահպանել իսլամական աշխարհի «միջուկի» (Իրան, Աֆղանստան եւ Պակիստան)՝ որտեղ խնդիրներն ավելի հստակ են երեւում ու առավել խորն են արմատավորված, եւ նրա «ծայրամասերի» միջեւ: Այսպես. այն վայրերում (ինչպիսին Ինդոնեզիան է), որտեղ այսօր լայնածավալ պատերազմի վտանգը մեծ չէ, ԱՄՆ-ը կջանա ուժերը կենտրոնաց-

նել քաղաքական գործընթացների կառավարման եւ տեղական իշխանություններին օգնելու ոչ ռազմական միջոցների իրացման վրա: Սակայն միայն ոչ ռազմական միջոցների կիրառման վրա հիմնված ռազմավարությունն արդյունք չի տա: Իսլամական աշխարհի «միջուկում» առկա խնդիրները չափազանց անհետաձգելի են, եւ Աֆղանստան ու Իրաք ներխուժումը դեռ միայն սկիզբն է: Ամերիկյան փորձագետների կարծիքով, *Իրանի միջուկային ծրագրի կենսագործման արագացումն էապես փոխեց տարածաշրջանի ռազմաքաղաքական զարգացման ընթացքը` չթողնելով հակասությունների խաղաղ լուծման հնարավորություն:*

Միաժամանակ, փորձագետները նշում են նաեւ ձեւավորվող իրավիճակի առանձնահատկությունը: ԱՄՆ-ին սպառնացող վտանգն այն է, որ չնայած Իրաքի դեմ իրականացված արագ եւ համեմատաբար հաջող արշավանքին, Միացյալ Նահանգները այսուհետ էլ տառապելու է «իրաքյան հոգնածությունից», ինչը շատ դեպքերում կարող է բացասական ազդեցություն ունենալ մերձավորարեւելյան տարածաշրջանի վերափոխման ռազմավարության կենսագործման վրա: Մասնագետների կարծիքով, ԱՄՆ-ը այսօր իրեն չի կարող թույլ տալ իրականացնել Իրաքից եւ Աֆղանստանից կամ ողջ տարածաշրջանից «դուրս գալու ռազմավարությունը»: ընդ որում, նա նաեւ չի կարող հետեւել «ստատուս քվոյի պահպանման ռազմավարությանը»:

Նման պայմաններում AEI փորձագետներն առաջարկում են շարունակել պահել տարածաշրջանում ԱՄՆ ռազմավարական հենակետեր Աֆղանստանը եւ Իրաքը` պահպանելով տարածաշրջանի ցանկացած կետում վճռականորեն հակահարվածելու ունակությունը:

\* \* \*

Ինչ վերաբերում է ամերիկյան ռազմական ստրատեգիայի երկրորդ կարելորագույն ուղղությանը, ապա AEI փորձագետները ելնում են նրանից, որ հաշվեկշռի պահպանումը հզորացող Չինաստանի ու նրա վիթխարի իրացման շուկայի եւ չինական քաղաքական ու ռազմավարական պահանջների միջեւ մոտակա ժամանակներում անհնարին կդառնա: AEI մասնագետները պնդում են, թե չին ժողովուրդը արժանի է ապրելու ազատ երկրում: Այս կապակցությամբ կարելի է ենթադրել, որ *Միացյալ Նահանգները մոտակա տարիներին ծրագրում է այդ երկրի ներքին կարգի վերափոխման ուղղությամբ եռանդուն աշխատել:*

Այսպիսով, ամերիկյան ռազմական ստրատեգիան կծգտի սահմանափակել Չինաստանի ռազմական հավակնությունները, խոչընդոտել Պեկինի ցանկացած փորձին` ուժով կամ ուժի սպառնալիքով ստանալ այն, ինչը նա չի կարող ստանալ խաղաղ միջոցներով: Կարելորագույն խնդիր է հան-

դիսանում Թայվան ներխուժելու չինական վտանգը: Սակայն ամերիկյան ռազմավարությունը հաշվի կառնի նաեւ աշխարհի ցանկացած մեկ այլ տարածաշրջանում ԱՄՆ շահերին վնասելու Չինաստանի մյուս հնարավորությունները: Այս համատեքստում AEI փորձագետներն առաջարկում են Պեկինին միայն տարածաշրջանային «խաղացող» չհամարել, այլեւ զնահատել նրան՝ որպես գլոբալ աշխարհաքաղաքականության գործոն:

AEI փորձագետների կարծիքով, Չինաստանն ահաբեկչության դեմ գլոբալ պատերազմը համարում է՝ ռազմավարական իմաստով «հարմար պահի» ստեղծում: Ամերիկյան արտաքին քաղաքականությունում շեշտադրումն ահաբեկչության դեմ պայքարի խնդիրների վրա փոխադրումը նվազեցրեց Չինաստանի վրա արտաքին քաղաքական ճնշումը՝ ոչ միայն տարածաշրջանում, այլեւ աշխարհում նրա դիրքի ամրապնդման համար տալով նոր հնարավորություններ: Միաժամանակ, վերջին ժամանակներս ամերիկյան զինված ուժերի ձեռնարկած մի շարք գործողություններ (Աֆղանստան ներխուժումը, Միջին Ասիայում ԱՄՆ զինուժի տեղակայումը, ռազմական համագործակցության ոլորտում Պակիստանի, Յնդկաստանի ու Ճապոնիայի հետ Միացյալ Նահանգների հարաբերությունների խորացումը) հանգեցրին չինական ղեկավարության կողմից այն իրողության ըմբռնմանը, որ ԱՄՆ անցկացրած կամպանիայի հիմնական նպատակը *Չինաստանի արագ օղակումն է, նրա շրջափակման եւ արտաքին աշխարհից մեկուսացնելու հնարավորության ապահովումը:*

Իրավիճակի նման զարգացումը ռազմավարական վերագնահատումներ առաջ բերեց նաեւ Չինաստանում: Այն, որ այսօր Պեկինն իր «մեծ ծայրագավառների» մեջ է ընդգրկել Կենտրոնական Ասիան ու Մերձավոր Արեւելքը, ԱՄՆ ռազմական վերլուծաբանների շրջանում լուրջ մտահոգություններ է հարուցում: Այսօր Պեկինի նպատակների մեջ են ներառվում բնական պաշարներից օգտվելու եւ շուկաներ կայուն կերպով մուտք գործելու հնարավորության ապահովումը եւ տարածաշրջանային ներկայության ու ազդեցության ընդլայնման ճանապարհով՝ «հակազսպման ռազմավարության» կենսագործումը, որն ուղղված է հաշվեկշռի պահպանմանը եւ Միացյալ Նահանգների հետ մրցակցության շարունակմանը:

Չինական ռազմավարության այս նոր շրջադարձի կարեւորագույն առանձնահատկությունն AEI փորձագետները համարում են մերձավորարեւելյան տարածաշրջանում իր ներկայությունը մեծացնելու Պեկինի հետաքրքրությունը: Չինաստանի համար էներգետիկ անվտանգությունը դառնում է առավել այժմեական առաջնայնություններից մեկը: Չինական տնտեսությունն էլ ավելի է կախվածության մեջ ընկնում էներգակիրներ մատակարարող աղբյուրներից, եւ այդ կախվածությունն առավել մեծ չափով ազդում է Պեկինի էներգետիկ ու ազգային անվտանգության քաղա-

քականության վրա: Միաժամանակ, չինական ղեկավարության մոտ շարունակում է հասունանալ ազգային շահերին սպառնացող հնարավոր վտանգի զգացումը, ինչը պայմանավորված է ԱՄՆ ռազմածովային ուժերի կողմից վերահսկվող նեղուցներով (ներառյալ Մալակայի ու Յորմուզի նեղուցները) լցանավերով մերձավորարեւելյան նավթի մատակարարումներից կախվածության մեծացումով:

Փորձագետները շեշտում են, որ էներգիայի պակասությունը մոտակա տարիներին Պեկինին նետված գլխավոր մարտահրավերն է լինելու: Չինաստանն արդեն այսօր ստիպված է չափավորել էներգակիրների սպառումը: Այս պայմաններում Պեկինն արդեն ծրագրում է ստեղծել նավթային ռազմավարական պաշար: Բացի այդ, նա ջանում է ընդարձակել էներգակիրների ներկրման խողովակաշարերի ցանցը, մեծացնում է համագործակցությունը Կենտրոնական Ասիայի պետությունների, ինչպես նաև՝ Իրանի ու Սուդանի հետ, այդ թվում՝ ռազմատեխնիկական ոլորտում, ինչը հարուցում է Միացյալ Նահանգների վարչակազմի առանձնակի մտահոգությունը:

AEI փորձագետները նշում են, որ քաղաքական եւ ռազմավարական պատկերացումներին համապատասխան, Պեկինը սեւեռվել է նավթի ու գազի աղբյուրների մենատիրական օգտագործման վրա: Նման մոտեցման հետեւանքը կլինի Չինաստանի եւ այն պետությունների միջեւ ռազմավարական գործընկերության ստեղծումը, որոնք նրան մատակարարում են նավթ ու գազ (առաջին հերթին՝ Կենտրոնական Ասիայի եւ Մերձավոր Արեւելքի երկրների հետ): Հաշվի առնելով, որ Միացյալ Նահանգները նույնպես ձգտում է համագործակցել Պարսից ծոցի ու Մերձավոր Արեւելքի նավթային պետությունների հետ, փորձագետների կարծիքով, շահերի այս դիմակայության աճը մոտակա ժամանակներում կարող է հանգեցնել ԱՄՆ եւ Չինաստանի միջեւ հարաբերությունների բարդացմանը:

*(տպագրվում է կրճատումներով)*

**«Независимое военное обозрение»,  
N7, 2005թ.**

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Վլադիսլավ Ինոզենցե** – *Յետինդուստրիալ հասարակության հետազոտությունների կենտրոնի գիտական ղեկավար, «Свободная мысль-XXI» հանդեսի գլխավոր խմբագիր:*

**Սերգեյ Կարազանով** – *Արտաքին եւ պաշտպանական քաղաքականության խորհրդի նախագահ, «Россия в глобальной политике» հանդեսի գլխավոր խմբագիր:*

Գլոբալ գործընթացների առավել անկանխատեսելիության, մարդկության դեմ արդեն հառնած խնդիրների խորացման եւ նորերի ծագման պայմաններում ոչ մի ազգային պետություն ի զորու չէ միայնակ երաշխավորել սեփական անվտանգությունը: Եթե որեւէ տարածաշրջան ներքաշվում է մի շարք կործանարար հակամարտությունների մեջ, ապա դրանց բացասական ազդեցությունն անխուսափելիորեն տարածվում է նաեւ մյուս, այդ թվում՝ առավել բարեկեցիկ երկրների ու տարածաշրջանների վրա: Ուստի, հատկապես այսօր, կարելու է գնահատել համաշխարհային քաղաքական ճարտարապետության զարգացման հնարավոր տարբերակները եւ որոշել դրանցից առավել ընդունելիները (կամ, առնվազն՝ նվազագույն աղետալիները):

Այսօր առկա հայեցակարգերն այն մասին, թե հետագայում աշխարհակարգն ինչպես էվոլյուցիայի կենթարկվի կամ պիտի ենթարկվի, կարելի է բաժանել երեք մեծ խմբի:

*Առաջին խումբը* կազմում են այն սցենարները, որոնց հիմքում համեմատաբար սովորական կատեգորիաների ուժի կենտրոններով կամ բեւեռներով աշխարհի իմաստավորումն է, թեեւ այդ հայեցակարգերի բովանդակությունները միմյանցից խիստ (երբեմն՝ նաեւ արմատապես) տարբերվում են:

Այսպես. սառը պատերազմի ավարտից հետո լայն տարածում գտավ (հատկապես ԱՄՆ-ում) այն գաղափարը, թե մոլորակի վրա երկար ժամանակով հաստատվել է Ամերիկայի կողմից փաստացի կառավարվող միաբեւեռ աշխարհ: Այս գաղափարի կողմնակիցները ելնում են նրանից, որ Միացյալ Նահանգները, գտնվելով իր հզորության ծաղկման շրջանում, ավելի մեծ չափով է իրականացնում միակողմանի գործողությունների ռազմավարությունը, իսկ ամերիկյան քաղաքական գործիչների եւ փորձագետների զգալի մասն արդեն կոկորդով մեկ գովերգում է նոր Կայսրության

ուժն ու մեծությունը: Իրադարձությունների նման զարգացման հետ երբեք չի համաձայնի համաշխարհային ընկերակցության անդամների մեծ մասը, որոնք, անշուշտ, կձգտեն համատեղ դիմակայել գլոբալ հեգեմոնին:

Բայց մեզ առավել էական է թվում ոչ այն, թե ինչպիսի հետեւանքների կհանգեցնի այդպիսի սցենարի կենսագործումը, այլ, որ այն հիմնված է կասկածելի նախադրյալների եւ ինքնախաբեության վրա: Այո՛, այսօր Ամերիկյան տնտեսապես հզորագույն տերությունն է: Սակայն նրա համեմատական հզորությունն էապես զիջում է անցած դարի 40-ականների վերջի եւ 50-ականների սկզբի կամ 20-ականների սկզբի մակարդակին: Առաջին հայացքից աննախադեպ թվացող ԱՄՆ ռազմական ներուժը «ստուգման» ժամանակ ծայրահեղ սահմանափակ է լինում, ինչի վկայությունն են մոլորակի մի շարք տարածաշրջանների իրավիճակների կարգավորման փորձերը: Վաշինգտոնի քաղաքական ազդեցությունը նույնպես բավարար չէ, որպեսզի արդյունավետ կերպով մեկուսացվեն ներկայիս աշխարհի ամենավտանգավոր գործընթացները: Օրինակ, ԱՄՆ-ը անկարող է կանխել Յնդկաստանի ու Պակիստանի կողմից միջուկային զենքի ձեռքբերումը կամ խոչընդոտել զանգվածային ոչնչացման զենքի (ՁՈՁ) բաղադրամասերի եւ արտադրության տեխնոլոգիաների՝ Իսլամաբադի ծավալած առեւտրին: Իր ողջ հզորությամբ հանդերձ, Ամերիկյան անգոր է նաեւ այժմեականության առանցքային հակամարտություններից մեկի՝ արաբա-իսրայելականի լուծման հարցում:

Ամերիկյան գերիշխանության հակառակորդները ջանում են ստեղծել այլընտրանքային մոդել եւ հանդես են գալիս բազմաբեւեռ աշխարհի օգտին: Սակայն նման տեսակետն անիրական է ու հնաճ, քանզի ժամանակակից աշխարհն անհնար է բերել միմյանց հավասարակշռող ուժի կենտրոնների հանրագումարի: Ինչպես եւ Միացյալ Նահանգներին հակակշռի ստեղծման հայեցակարգը, այս գաղափարն ուղղված չէ նոր գլոբալ խնդիրների լուծմանը, եւ նույնիսկ «բազմաբեւեռություն» եզրի իմաստը ենթադրում է ոչ թե համագործակցություն, այլ միջազգային գործերում մրցակցություն: Այսօր այդ հայեցակարգի առավել հետեւողական կողմնակիցներ են Չինաստանն ու Ֆրանսիան: Ռուսաստանը նրանց ազդեցության տակ է եւ սեփական ուղու որոշման հարցում տատանվում է, ինչը երբեմն դրսեւորվում է Վաշինգտոնի ամբարտավանությունից առաջացած նրա դժգոհության մեջ: Սակայն, վերջին ժամանակներս ռուս ղեկավարները նախընտրում են օգտագործել «բազմակետորականություն» եզրը, որը չունի հստակ քաղաքական (առավել եւս՝ հակաամերիկյան) երանգավորում: Նման մոտեցումն արտացոլում է գործնական քաղաքականության նվիրվածությունը «մշտական խուսանավմանը»: Արագ փոփոխվող աշխարհում, որտեղ մնայուն դաշինքներն ու կողմնորոշումներն անհնա-



րին, նույնիսկ անցանկալի են, այն անխուսափելի է: Դա հատկապես էական է այնպիսի երկրի համար, ինչպիսին Ռուսաստանն է, որի դիրքերը ժամանակավորապես թուլացել են եւ որը միաժամանակ հայտնվել է հարուստ ու աղքատ երկրների, անկում ապրող իսլամական մեծ քաղաքակրթության ու դեռեւս առավել հաջողակ քաղաքակրթությունների բեկման գծին: Սակայն «բազմավեկտորականությունը» մնում է ոչ այնքան որպես աշխարհակարգի հայեցակարգ, որքան՝ մի որոշ ժամանակ ընտրությունից խուսափելու միջոց:

Որքան էլ որ տարբեր թվան միաբեւեռ ու բազմաբեւեռ աշխարհների գաղափարները, դրանք երկուսն էլ խարսխված են ընդհանուր նախադրյալների վրա. յուրաքանչյուր երկիր կամ երկրների խումբ, որեւէ քաղաքականություն վարելիս, ելնում է մյուս երկրների հանդեպ իր վերաբերմունքից: Այսպիսի գաղափարախոսությունը, մեր կարծիքով, իր դարն ապրել է եւ անհեռանկարային է:

Այն հայեցակարգերի կողմնակիցները, որոնք պայմանականորեն կարելի է միավորել *երկրորդ խմբում*, կոչ են անում հրաժարվել հաշվեկշռի հասնելու ձգտումից՝ հօգուտ աշխարհի կառավարելիության մի որեւէ պարադիգմայի (իրականության կարելորագույն գծերն արտահայտող հայեցակարգային մոդել՝ որոշակի պատմական ժամանակահատվածի համար—*խմբ.*) ստեղծման: Նրանցից առավել հետեւողականները պաշտպանում են համաշխարհային կառավարության գաղափարը: Սակայն այս գաղափարը կորցնում է իր համբավը՝ անկում ապրող պետությունների թվի աճին, ՄԱԿ-ի դերի նվազմանը, ամենուրեք ազգայնական եւ անջատողական միտումների սաստկացմանը զուգընթաց: Այս ֆոնի վրա, որպես միակ, բայց չափազանց կարելուր բացառություն, հանդես է գալիս Եվրամիությունը: Բոլոր ակնհայտ խնդիրներով հանդերձ (Եվրոպական բյուրոկրատիայի դանդաղկոտությունը, ԵՄ արտաքին ազդեցության եւ նրա տնտեսական ու սոցիալական ներուժի անհամադրելիությունը եւ այլն)՝ միացյալ Եվրոպան համաշխարհային կառավարության հաջողված նախագիծ է: Ուզում ենք հավատալ, որ այս նախագիծը կապրի՝ չխորտակվելով պատմության հորձանուտում:

Եվրոպական փորձի հաջողությունը «սնունդ» է եւս մեկ հայեցակարգի, որի հետեւողները հանդես են գալիս համաշխարհային կառավարության տարբերակի բացասման օգտին, բայց, ըստ էության, հորդորում են «կենտրոնը» անջրպետել «ծայրամասերից»: Ելնելով քաղաքական բարեկրթության նկատառումներից՝ միայն քչերն են հանդգնում բացահայտորեն ձեւակերպել այդ գաղափարը: Սակայն նման մոտեցման տարրեր դիտվում են զարգացած երկրների քաղաքականությունում, որոնք, հայտարարելով առաջընթացին աջակցելու անհրաժեշտության մասին,

գործնականում կրճատում են օգնությունը, ըստ էության՝ հեռանում են աղքատացող ու դեգրադացվող Աֆրիկայից, նվազեցնում ՁՈՁ տարածման վտանգը: Նույնիսկ Եվրոպան, մնալով մարդասիրական օգնության խոշորագույն աղբյուր, էլ ավելի է կենտրոնանում սեփական խնդիրների եւ սահմանակից երկրների իրավիճակների վրա՝ ի վնաս իր միջազգային քաղաքական ակտիվության: Ձարգացած երկրների էսկապիզմն (իրականությունից պատրանքների ու երեւակայությունների աշխարհի հեռանալու ձգտում—*խմբ.*) առավել ակնհայտորեն է դրսևորվում «ընդլայնված» Մերձավոր Արեւելքի նկատմամբ վարվող կուրսում: Խնդիրները, որոնք կուտակվել էին այնտեղ տասնամյակների ընթացքում, նախընտրեցին չնկատել, ինչպես որ անտեսեցին Աֆրիկայի հրեշավոր պատերազմները:

Նման մոտեցման վրա հիմնված քաղաքականությունը հազիվ թե աշխարհի արդյունավետ կառավարման հիմք ծառայի: Փորձը ցույց է տալիս, որ հետամնաց երկրները, որպես օրենք, անընդունակ են ինքնուրույն դուրս գալ ճգնաժամից, եւ նրանց մոտ, վաղ թե ուշ, հասունանում են խնդիրներ (ահաբեկչությունից ու ՁՈՁ ծավալումից մինչեւ տեղային էկոլոգիական համակարգերի կործանում եւ ընդգրկուն համաճարակների բռնկում), որոնք ընդգրկում են մնացած բոլոր տարածաշրջանները:

Աշխարհի կառավարելիության՝ համաշխարհային կառավարության ձեւավորման եւ «անջրպետման» այս երկու դիտարկված հայեցակարգերի անարդյունավետությունը դրդում է գլոբալ կառավարման մի նոր պարադիգմայի մշակման: Նրա էությունը հետեւյալն է. առաջադեմ եւ առավել հզոր ազգերը պետք է ոչ բարեկեցիկ պետություններին պարտադրեն տարրական կարգ ու կանոն: Նման կառավարումը կարող է ունենալ երկու մակարդակ՝ ցրված եւ կոլեկտիվ:

*Ցրված կառավարում.* որեւէ պետության՝ սեփական տարածքում քաղաքացիների նվազագույն իրավունքը պաշտպանելու անկարողությունը հիմք է տալիս պարտադրելու նրան «արտաքին կառավարում»: Այն իրականացվում է «հումանիտար ներխուժման» միջոցով, դրան հաջորդող՝ տարածքի մի մասի բռնի անջատմամբ կամ խաղաղապահ ուժերով լրիվ օկուպացմամբ (որպես օրինակ կարող են ծառայել ՆԱՏՕ փորձը նախկին Չարավալալիայում, Ռուսաստանի գործողությունները Մերձդնեստրում, Չարավալիին Օսիայում եւ Աբխազիայում, ինչպես նաեւ՝ մի շարք Եվրոպական երկրների ռազմական միջամտություններն Աֆրիկայի իրենց նախկին գաղութների գործերին): Վերջին տասնամյակների իրադարձությունները հավաստում են, որ «կենտրոնի» երկրները հարկադրված են լինելու ավելի հաճախակի դիմել այդ ոչ միանշանակ կերպով ընդունվող կառավարման «գործիքին»: Այն կիրառելու ճանապարհին խոչընդոտ է հանդիսանում նրա օրինականացման մեխանիզմի բացակայությունը, ինչը երբեմն

այդպիսի կառավարումը վերածում է քառսի, մրցակցության եւ փոխադարձ կասկածանքի հերթական աղբյուրի: Ահա թե ինչու նման քաղաքականությունը, մեր կարծիքով, պետք է անցկացվի միջազգային ընկերակցության անունից. հնարավոր է՝ ՄԱԿ-ի խնամակալության տակ գտնվող տարածքների ինստիտուտի վերստեղծման միջոցով, որոնք կկառավարվեն մեծ տերությունների կամ նրանց խմբերի մանդատով: Հայտնի չէ նաեւ, թե այդպիսի քաղաքականությունը կենսագործելու համար կբավականացնի, արդյոք, առաջատար եւ առավել զարգացած ժողովրդավարական պետությունների կամքը: Խիստ հավանական է, որ ո՛չ. հատկապես պատերազմներից ու գաղութային բախումներից հոգնած Եվրոպայում:

*Կոլեկտիվ կառավարում.* այն ենթադրում է ազգերի նոր «համերգի» ստեղծում, որը հետապնդում է վերը նկարագրված նպատակները, բայց գործում է առաջատար, առավել հզոր պետությունների՝ համաշխարհային ընկերակցությունում բացահայտ գերակայության ճանապարհով: Միասին նրանք ընդունակ են համաշխարհային ընկերակցությանը թելադրել իրենց կամքը եւ հակադրել քառսի սաստկացմանն ինչպես ուղղակիորեն, այնպես էլ՝ միջազգային կազմակերպությունների միջոցով: Այս հայեցակարգը մեզ թվում է առավել համարժեք ու հետեւողական, թեեւ՝ դժվար իրագործելի: Նրա գլխավոր առավելությունն այն է, որ ենթադրում է առաջատար պետությունների համագործակցություն, որոնք հսկում են համախառն համաշխարհային արդյունքի մեծ մասը, թողարկում հիմնական նոր տեխնոլոգիաները եւ տնօրինում ցանկացած հնարավոր կոալիցիաների ներուժի հետ անհամեմատելի լծակների: Այդ երկրների կողմից կոլեկտիվ գործողությունների ռազմավարության մշակումը տպավորիչ բեկում կլինի միջազգային հարաբերությունների ասպարեզում: Սակայն նման պարադիգմայի (որի ուրվագծերը ոչ ակնհայտ կերպով երեւում են «մեծ ութնյակի» գաղափարում եւ որն առկա է ՄԱԿ Անվտանգության խորհրդի առանձին գործողություններում) ինստիտուցիոնալ հիմքն առայժմ խիստ անորոշ է երեւում:

Ի վերջո, գոյություն ունի հայեցակարգերի *երրորդ խումբ*, որն իր մի մասի հոռետեսության ու մյուս մասի՝ ոչնչով չհիմնավորված լավատեսության պատճառով, կրնութազրեւր որպես լուսանցքային:

Հոռետեսները հաստատում են, թե աշխարհը սողում է դեպի գլոբալ քառսի վիճակ, որին դիմակայել անհնարին է: Քառսացումը շատերին է վախեցնում: Մտավախություններն ավելացան հատկապես այն բանից հետո, երբ ներկայիս աշխարհի առաջատար Միացյալ Նահանգները, ներխուժելով Իրաք, լրջորեն վնասեց իր հզորությունը: Ռազմական ուժի անխտեն գործածման հետեւանքով Վաշինգտոնը, դեպի միաբեւեռ աշխարհ շարժվելու փոխարեն, հարցականի տակ դրեց իր ազդեցությունը՝ հսկա-

յական քայլ կատարելով դեպի «անբեւեռ»՝ քառսային ու անվերահսկելի աշխարհ:

Ապագայի իրավիճակի զարգացման հանդեպ՝ դրան հակառակ, չափից ավելի լավատեսական մոտեցման օրինակ է մի սցենար, որը լայն ճանաչում է վայելում ամերիկյան փորձագետների շրջանում: Նրանց կարծիքով, խաղաղության եւ կայունության գրավական կարող է լինել ավելի շատ նորանոր երկրների ժողովրդավարացումը. իբր ժողովրդավարություններն ագրեսիվ, ռազմաշունչ քաղաքականություն չեն վարում: Սակայն տվյալ կանխադրույթը կիրառելի է սոսկ ազատական ժողովրդավարությունների նկատմամբ ու ոչ մի կապ չունի ոչ ազատական ժողովրդավարությունների հետ, որոնք կառաջանան արհեստական (բռնի) ժողովրդավարացման արդյունքում: Ժողովրդավարական ձեւական կառավարման արագացված պարտադրումը, ասենք, Սաուդյան Արաբիայում կամ հենց նույն Իրաքում, կարող է լրջորեն խաթարել միջազգային կայունությունը:

\* \* \*

Մեր կարծիքով, գալիք աշխարհակարգի վերը թվարկված հայեցակարգերից ամենահեռանկարայինն այն է, որը հիմնված է առաջատար պետությունների խմբի կողմից իրականացվող *կոլեկտիվ կառավարման* գաղափարի վրա: Լինելով այդ գաղափարի կողմնակիցներ՝ մենք, այնուամենայնիվ, չենք մերժում աշխարհակառուցվածքի մյուս բոլոր ուսմունքները՝ հանդես գալով համադրական հայեցակարգի ստեղծման օգտին, որը հաշվի կառնի յուրաքանչյուր շարադրված մոտեցման թերությունները եւ ընդունելի կլինի համաշխարհային քաղաքականության սուբյեկտների մեծ մասի համար:

Որքանով այս բոլորը իրական կլինի՝ կախված է զարգացած երկրների՝ իրենց քաղաքականությունները ներդաշնակեցնելու, ընթացիկ իրավիճակային նպատակներն անվտանգ ու կանխատեսելի աշխարհի կառուցման խնդիրներին ստորադասելու ունակությունից: Մենք այսօր չենք կարող վստահ ասել, թե որքան ուժեղ կլինի այդ երկրների՝ ընտրած ուղիով շարժվելու վճռականությունը: Սակայն հուսով ենք, որ հեռանկարային պատկերացումները կհաղթեն այսրոպեական շահերին:

*(տպագրվում է կրճատումներով)*

**«Россия в глобальной политике»**,  
փետրվար, 2005թ.

## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Դավիթ Յովհաննիսյան</b> <b>ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԴԱՊՏԱՑՈՒՄԸ</b> <b>ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ</b> .....	<b>1</b>
<b>Սարգիս Հարությունյան</b> <b>ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԱԴԻԲԵՋԱՆԻ ՈՒԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ</b> ..	<b>6</b>
<b>Կարեն Վերանյան</b> <b>ԱԴԻԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ</b> <b>ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ</b> .....	<b>12</b>
<b>Սեւակ Սարուխանյան</b> <b>ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ</b> <b>ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</b> .....	<b>18</b>
<b>Արաքս Փաշայան</b> <b>ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ</b> <b>ԻՐԱՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>22</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b> <b>ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊՒ</b> <b>ԱՇԽԱՐՀԱԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>28</b>
<b>Սերգեյ Գրիգորյան</b> <b>ԱՄՆ ՌԱԶՄԱՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ</b> <b>ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ</b> .....	<b>33</b>
<b>Վլադիսլավ Ինոզեմցեւ, Սերգեյ Կարազանով</b> <b>21-ՐԴ ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</b> .....	<b>39</b>

*Շապիկի վրա պատկերված է  
Ակնա լիճը (Գեղարքունիք)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: